

Հանրության պատրաստվածությունը և պատրաստակամությունը՝ աջակցելու Հայաստանում կանաչ անցման նախաձեռնություններին. ազգային զեկույց

Մշակվել է Ստոկհոլմի շրջակա միջավայրի ինստիտուտի «Կանաչ օրակարգ Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի համար» ծրագրի շրջանակում

Նախաբան

Այս հետազոտական զեկույցը մշակվել է Վերլուծական և խորհրդատվական թիմի (ACT) կողմից՝ Ստոկհոլմի շրջակա միջավայրի ինստիտուտի (SEI) պատվերով վերջինիս «Կանաչ օրակարգ Հայաստանի, Վրաստանի, Մոլդովայի և Ուկրաինայի համար» ծրագրի շրջանակում: **Այս ուսումնասիրությամբ ներկայացված տեսակետները, կարծիքները և մեկնաբանությունները բացառապես հեղինակներինն են, և պարտադիր չէ, որ արտացոլեն Ստոկհոլմի շրջակա միջավայրի ինստիտուտի (SEI) պաշտոնական քաղաքականությունը կամ դիրքորոշումը:** Արդյունքներն ու եզրակացությունները հիմնված են հեղինակների կողմից վերլուծված տվյալների վրա և պետք է բացառապես դիտարկվեն միայն այս հետազոտության համատեքստում:

Վերլուծական և խորհրդատվական թիմ (ACT)

ACT Global-ը կանանց ղեկավարությամբ գործող խորհրդատվական ընկերություն է, որի գլխամասային գրասենյակը Վրաստանի մայրաքաղաք Թբիլիսիում է: Ունենալով ավելի քան 20 տարվա փորձ՝ կազմակերպությունն աջակցում է փոփոխությունների իրագործմանը աշխարհի ավելի քան 30 երկրում՝ հատկապես կենտրոնանալով Արևելյան գործընկերության, Կենտրոնական Ասիայի, Մերձավոր Արևելքի և Հյուսիսային Աֆրիկայի (MENA), ինչպես նաև Արևմտյան Բալկանների տարածաշրջանների վրա:

ACT Global-ը համագործակցում է առաջատար դոնոր կազմակերպությունների հետ, այդ թվում՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության (USAID), ՄԱԿ-ի գործակալությունների, Եվրոպական միության, Համաշխարհային բանկի, ինչպես նաև մասնավոր հատվածի ընկերությունների, քաղաքացիական հասարակության կազմակերպությունների և պետական կառույցների հետ՝ տրամադրելով փաստարկված և տվյալների վրա հիմնված աջակցություն տնտեսական, սոցիալական և կառավարման բարեփոխումների իրականացման համար: Կազմակերպության հիմնական մասնագիտացումները ներառում են լավ կառավարում, սոցիալական ներառում և փոխակերպում, տնտեսական զարգացում, ինչպես նաև ռազմավարական խորհրդատվություն կորպորատիվ հաճախորդների համար:

ACT Global-ը հավատարիմ է սոցիալական փոփոխությունների խթանմանը՝ նպաստելով տեղեկացված որոշումների կայացմանը, կայուն զարգացմանը և նորարարությանը:

Կազմակերպությունը տարբեր երկրներում ունի նաև իր գործընկերները: Ներկայացված հասարակական կարծիքի ուսումնասիրությունն իրականացվել է հայկական «International Marketing Research» (IMR) ընկերության հետ սերտ համագործակցությամբ: Հայկական ընկերությունը համակարգել է տվյալների հավաքագրման ազգային գործընթացը:

Ստոկհոլմի շրջակա միջավայրի ինստիտուտ (SEI)

Ստոկհոլմի շրջակա միջավայրի ինստիտուտը (SEI) շահույթ չհետապնդող հետազոտական և քաղաքականության միջազգային կազմակերպություն է, որի ուշադրության կենտրոնում են շրջակա միջավայրի և զարգացման մարտահրավերները: Գիտությունը կապելով քաղաքականության ազդեցության հետ՝ SEI-ն անդրադառնում է կլիմայի, ջրի, օդի, հողօգտագործման, կառավարման, տնտեսության, գենդերային և առողջապահական խնդիրներին: SEI-ն ընդգծում է շահագրգիռ կողմերի ներգրավվածությունը, կարողությունների զարգացումը և ինստիտուցիոնալ աջակցությունը՝ երկարաժամկետ ազդեցություն ապահովելու համար: Հետազոտության արդյունքները հասանելի են

Նախաբան

որոշումներ կայացնողներին և հանրությանը բաց տիրույթում հասանելի նյութերի, ակադեմիական հրապարակումների և որոշումների կայացմանաջակցող գործիքների միջոցով: SEI-ն նաև նպաստում է գիտելիքների փոխանակմանը՝ համախմբելով քաղաքական, ակադեմիական և գործնական հանրությունների շահակիցներին՝ իր գրասենյակների միջոցով գործելով տեղական և գլոբալ մակարդակներում՝ հինգ մայրցամաքում:

Մեջբերում

ACT Global (2024թ.), Հանրության պատրաստվածությունը և պատրաստակամությունը՝ աջակցելու Հայաստանում կանաչ անցման նախաձեռնություններին. ազգային զեկույց, Ստոկհոլմի շրջակա միջավայրի ինստիտուտ (SEI)

Բովանդակություն

Հիմնական բացահայտումներ 5

1. Ներածություն 13

2. Մեթոդաբանություն 15

3. Հանրային հարցման արդյունքներ 17

3.1. Կլիմայի փոփոխության մասին պատկերացումը Հայաստանում 18

3.2. Կլիմայի փոփոխության և բնապահպանական խնդիրների մասին տեղեկատվության աղբյուրները Հայաստանում 23

3.3. Կլիմայի փոփոխության ազդեցության մասին ընկալումները Հայաստանում 26

3.4. Կլիմայի փոփոխության արմատական պատճառների ընկալումը Հայաստանում 32

3.5. Բնապահպանական խնդիրները և շրջակա միջավայրի պահպանության առաջնահերթ ոլորտները Հայաստանում 34

3.6. Շրջակա միջավայրի պահպանության գործում տարբեր դերակատարների ընկալվող կարևորությունն ու արդյունավետությունը 37

3.7. Անձնական ներգրավվածությունը շրջակա միջավայրի պահպանության գործում Հայաստանում 44

3.8. Հայաստանում էներգաարդյունավետության և էներգետիկ անվտանգության վերաբերյալ պատկերացումները 49

3.9. Հանրային աջակցություն թեմատիկ նախաձեռնություններին 55

4. Եզրակացություն 58

Հավելված 1. Հարցվողների ժողովրդագրական տվյալներ 61

Հավելված 2. Հետազոտության մեթոդաբանություն 62

Հավելված 3. Շրջակա միջավայրի պահպանության գործում անհատական ներդրման արդյունավետ ուղիների վերաբերյալ ընկալումները 65

Հավելված 4. Հանրային աջակցություն տարատեսակ նախաձեռնություններին 66

Հիմնական բացահայտումներ

Հանրության պատրաստվածությունը և պատրաստակամությունը՝ աջակցելու Հայաստանում կանաչ անցման նախաձեռնություններին. ազգային զեկույց

Հիմնական բացահայտումներ

Կլիմայի փոփոխության ընկալումը Հայաստանում





10 անձից 4-ն
իր գիտելիքները բնութագրում է որպես «լավ» (18%) կամ «շատ լավ» (20%)

10-ից 1-ը
համարում է, որ իր պատկերացումը «վատ» է (7%)

10 անձից 5-ն
իր գիտելիքները գնահատում է «չափավոր»

Նպատակը կլիմայի փոփոխության վերաբերյալ նրանց պատկերացնումները խորապես հասկանալն է:

Վճռորոշ դեր է խաղում տարիքը.
ընկալվող գիտելիքներն իրենց առավելագույն մակարդակին են հասնում 35-44 տարիքային խմբում:



Կրթական մակարդակի և կլիմայի փոփոխության մասին ընկալվող պատկերացումների միջև կապը հետաքրքիր միտում է ցույց տալիս: Իրենց գիտելիքները շատ լավ են բնութագրում.



Կլիմայի փոփոխության և բնապահպանական խնդիրների մասին տեղեկատվության աղբյուրները Հայաստանում

Ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ Հայաստանում կլիմայի փոփոխության մասին պատկերացումների և շրջակա միջավայրի մասին տեղեկատվության ստացման միջև կապը բացակայում է: Վերջին երեք ամիսներին որևէ թեմատիկ տեղեկատվություն չեն ստացել.

«լավ»

«շատ լավ»

Հիմնական բացահայտումներ

Կլիմայի փոփոխության և բնապահպանական խնդիրների մասին տեղեկատվության աղբյուրները Հայաստանում

Facebook-ը թեմատիկ տեղեկատվության հիմնական աղբյուր է.

- 70% Գործազուրկների
- 64% ♀
- 62% 35-44 տարիքային խմբի
- 60% Գյուղաբնակների
- 60% Միջնակարգ կրթություն ունեցողների
- 60% Բարձրագույն կրթություն ունեղոցների
- 59% Ամուսնացածների
- 49% ♂

Հայաստանում մարդիկ տեղեկատվության վստահելիությունը գնահատում են հետևյալ չափանիշներով.



Կլիմայի փոփոխության ազդեցության մասին ընկալումները Հայաստանում

Անձնական շրջապատը վճռորոշ նշանակություն ունի կլիմայի փոփոխության ազդեցությունների մասին իրազեկվածության բարձրացման գործում:

86%

Ընտանիքից, ընկերներից, հարևաններից կամ գործընկերներից բնապահպանական տեղեկատվություն ստացողների 86%-ը նշում է, որ կլիմայի փոփոխությունն ուղղակիորեն ազդում է իրենց կամ շրջապատող մարդկանց վրա:

Հիմնական բացահայտումներ

77% նշում է, որ զգացել է կլիմայական փոփոխությունների ազդեցությունը՝ առավել հաճախ նշելով.

- **90%** առողջության վրա բացասական ազդեցությունը
- **77%** եղանակային տատանումները
- **70%** բնական աղետները
- **61%** տնտեսական բացասական ազդեցությունը
- **43%** շրջակա միջավայրի գործոններով պայմանավորված տեղահանումները

Կլիմայի փոփոխության արմատական պատճառների մասին ընկալումը Հայաստանում

Կլիմայի փոփոխության արմատական պատճառների մասին ընկալումները զգալիորեն համընկնում են գյուղական, քաղաքային և մայրաքաղաքի բնակիչների շրջանում:

Մարդկային գործունեությամբ պայմանավորված բնության ավերումը՝ **անտառահատումը**, ամենաճանաչված գործոնն է:

- **85%** Գյուղական
- **84%** Մայրաքաղաքային
- **81%** Քաղաքային

Ոչ էներգաարդյունավետ միջոցների կիրառումն ամենաքիչ ճանաչելի պատճառն է:

- **58%** Մայրաքաղաքային
- **58%** Քաղաքային
- **56%** Գյուղական

Բնապահպանական խնդիրները և շրջակա միջավայրի պահպանության առաջնահերթ ոլորտները Հայաստանում

Առավել սուր է բնապահպանական գործոններով պայմանավորված պարենային ապրանքների որակի վատթարացումը:

- **70%** Մայրաքաղաքային
- **65%** Գյուղական
- **61%** Քաղաքային

Գյուղատնտեսական խնդիրները ևս կարևոր մարտահրավեր են:

- **70%** Գյուղական
- **65%** Քաղաքային
- **61%** Մայրաքաղաքային

Հետաքրքրական է, որ ոչ բոլորն են զգում բնապահպանական խնդիրներն իրենց վրա. հարցվածների 4%-ը նշում է, որ իրենք չեն ունեցել նման փորձառություն:

Հիմնական բացահայտումներ

Հայաստանում բնապահպանական առաջնահերթությունները՝ ըստ կարևորության.



Շրջակա միջավայրի պահպանության գործում տարբեր դերակատարների ընկալվող կարևորությունն ու արդյունավետությունը

Շրջակա միջավայրի պահպանության ամենակարևոր աջակիցները:
(Միայն ամենաշատ և ամենաքիչ կարևորները)



Շրջակա միջավայրի պահպանության ամենաարդյունավետ աջակիցները:
(Միայն ամենաշատ և ամենաքիչ կարևորները)



Միջազգային համայնքը և դոնոր կազմակերպությունները նույնպես առանցքային դերակատարներ են համարվում շրջակա միջավայրի պահպանության գործում:

Հայաստանի շրջակա միջավայրի քաղաքականությունների ձևավորման գործում ԵՄ հետ համագործակցության դերը՝ ըստ հարցվածների.

Հիմնական բացահայտումներ

Անձնական ներգրավվածությունը Հայաստանում շրջակա միջավայրի պահպանության գործում

Շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող գործողություններում ներգրավվածությունը տարբերվում է ըստ ժողովրդագրական խմբերի: Մասնակցության ամենաբարձր ցուցանիշները գրանցվել են հետևյալ խմբերի կողմից (շատից՝ քիչ).

Հիմնական բացահայտումներ

Շրջակա միջավայրի պահպանության գործում անհատական ներդրման արդյունավետ եղանակների վերաբերյալ ընկալումներ

Շրջակա միջավայրի պահպանության ուղղությամբ անհատական գործողությունները՝ ըստ արդյունավետության.

Շրջակա միջավայրի պահպանության գործունեությամբ զբաղվելու խոչընդոտները.



Հայաստանում էներգակիրների գների հետ կապված մտահոգություն.



Հարցվածների միայն **4%-ը** էներգիայի գների հետ կապված մտահոգություն չի հայտնել:

Հիմնական բացահայտումներ

Վերականգնվող էներգետիկայի ներդրման պրակտիկան Հայաստանում

19%

Տնային տնտեսություններում վերականգնվող էներգիայի անցում:
Կիրառողների մեծ մասը **(51%)** տղամարդիկ են:
Չկիրառողների համար առաջնային խոչընդոտներն են:
Ծախսը 43% | Համոզմունքը՝ պրակտիկ չէ 13%

Հանրային կարծիքը Հայաստանում վերականգնվող էներգիայի մասին

Հայաստանում հանրությունը «**խիստ համաձայն**» է, որ

1. Վերականգնվող էներգիայի աղբյուրներն էկոլոգիապես ավելի մաքուր են, քան բրածո վառելիքները:

   46% գյուղական

2. Կառավարությունը պետք է ֆինանսական արտոնություններ տրամադրի վերականգնվող էներգիայի համակարգեր կիրառող տնային տնտեսություններին:

   86% ասպիրանտների, Դոկտորանտների կամ համարժեք թեկնածուների՝

   74% բուհերի շրջանավարտներ

3. Վերականգնվող էներգիայի կիրառությունը կարող է բարձրացնել իրենց համայնքի սոցիալական և տնտեսական բարեկեցությունը: (Քաղաքային, ոչ մայրաքաղաքային)

   69% գյուղական | 69 % ոչ մայրաքաղաքային

Հայաստանի էներգակիրների՝ օտարերկրյա աղբյուրներից կախվածության վերաբերյալ հանրության մտահոգությունները

Հանրության մեծամասնությունը՝ 62%-ը, մեծ մտահոգություն է հայտնում երկրի էներգակիրների՝ օտարերկրյա աղբյուրներից կախվածության վերաբերյալ, ընդ որում.



Հայաստանում ավելի մեծ էներգետիկ անկախության հասնելու ուղիների մասին պատկերացումները

91%

Հայաստանում էներգետիկ անկախության ձեռքբերման ամենամեծ աջակցություն վայելող մոտեցումն արևային և հողմային էներգիայի զարգացումն է:

65 տարեկան **96%** | Գյուղական **93%**

Հիմնական բացահայտումներ

Հանրային աջակցություն թեմատիկ նախաձեռնություններին

Բնապահպանական ոլորտում կրթական ծրագրերը և տեղեկատվական արշավները ստանում են ամենաբարձր հանրային աջակցությունը, իսկ հասարակական կազմակերպությունների նախագծերը՝ ամենաքիչ աջակցությունը:

Նման նախաձեռնություններին նպաստելիս Հայաստանում մարդիկ նախընտրում են.



Նախաձեռնություններին աջակցելու հիմնական խոչընդոտներներից են.

Ներածություն

Հանրության պատրաստվածությունը և պատրաստակամությունը՝ աջակցելու Հայաստանում կանաչ անցման նախաձեռնություններին. ազգային զեկույց

1. Ներածություն

Ստոկհոլմի շրջակա միջավայրի ինստիտուտի (SEI) «Կանաչ օրակարգ» ծրագիրը կանաչ փոխակերպման ռազմավարությունների միջոցով աջակցում է Հայաստանին, Վրաստանին, Մոլդովային և Ուկրաինային կլիմայական չեզոքությունը զարգացնելու հարցում՝ հ ամապատասխանեցվելով Եվրոպական Կանաչ գործարքին: Ծրագիրը մշակում է կայուն զարգացման ազգային ճանապարհային քարտեզներ՝ նպատակ ունենալով արդիականացնել տնտեսությունները, բարձրացնել քաղաքացիների բարեկեցությունը և լուծել կլիմայի նպատակները մաքուր էներգիայի, շրջանաձև տնտեսության և կենսաբազմազանության ոլորտներում: Այս ջանքերը նաև աջակցում են քաղաքականության համապատասխանեցմանը ԵՄ շրջանակների հետ՝ հեշտացնելով հնարավոր համագործակցությունը և կատարելով Փարիզյան համաձայնագրով ստանձնած պարտավորությունները:

Որպես այս նախաձեռնության մաս՝ սույն ուսումնասիրությունը հետազոտում է Հայաստանում հանրային ընկալումներն ու վերաբերմունքը կլիմայի փոփոխության, շրջակա միջավայրի պահպանության, էներգետիկ անվտանգության ու արդյունավետության և ԵՄ-ի հետ թեմատիկ համագործակցության նկատմամբ: Այն գնահատում է իրազեկվածությունը, ներգրավվածությունն ու աջակցությունը տարբեր նախաձեռնություններին և բացահայտում դրանց մասնակցության խոչընդոտների վերաբերյալ պատկերացումները: Բացի այդ՝ վերլուծությունը խորապես ուսումնասիրում է հանրային կարծիքը, թե որքան արդյունավետ ու կարևոր են տարբեր դերակատարները բնապահպանական քաղաքականության և գործողությունների իրականացման գործում: Արդյունքներն ընդգծում են հանրային տեսակետներն այն մասին, թե ինչպես երկիրը կարող է հարմարվել և մեղմել կլիմայի փոփոխության ազդեցությունը կայուն գործելակարգերի և քաղաքականության միջոցով:

Մեթոդաբանություն

Հանրության պատրաստվածությունը և պատրաստակամությունը՝ աջակցելու Հայաստանում կանաչ անցման նախաձեռնություններին. ազգային զեկույց

2. Մեթոդաբանություն

Այս ուսումնասիրությունը գնահատում է հանրության պատրաստվածությունն ու պատրաստակամությունը Հայաստանում աջակցելու կանաչ փոխակերպման նախաձեռնություններին՝ կենտրոնանալով հանրային իրազեկման, վերաբերմունքի և կլիմայի փոփոխության ու բնապահպանական խնդիրների հետ կապված ներգրավվածության վրա: Հետազոտության նպատակն է ուսումնասիրել կլիմայի փոփոխության հանրային ընկալումը, գնահատել տեղեկատվության աղբյուրները և դրանց վստահելիությունը ձևավորող չափանիշները, վերլուծել կլիմայի փոփոխության ազդեցության ընկալումները ժողովրդագրական խմբերում, ուսումնասիրել կլիմայի փոփոխության ընկալվող արմատական պատճառները, նրանց անձնական ներգրավվածությունը պահպանության հանրային առաջնահերթությունները, գնահատել այդ գործում տարբեր դերակատարների դերն ու արդյունավետությունը, նրանց անձնական ներգրավվածությունը թեմատիկ գործողություններում, հետազոտել էներգետիկ արդյունավետության ու անվտանգության ընկալումները, գնահատել թեմատիկ նախաձեռնություններին ցուցաբերվող աջակցությունը՝ ներառյալ նախընտրելի ներդրումներն ու խոչընդոտները:

ACT-ն իրականացրել է երկու ֆոկուս-խմբային քննարկում (յուրաքանչյուր խմբում՝ վեց մասնակից) հանրության և ոլորտային մասնագետների հետ, ինչպես նաև հինգ համապարփակ, ճանաչողական թեստավորման հարցազրույցներ՝ հետազոտության գործիքը մշակելու և կատարելագործելու համար, որոնց հաջորդել է 16 տարեկան և ավելի բարձր տարիքային խմբում գտնվող 1,000 անհատների մասնակցությամբ համազգային հեռախոսային հարցումը (CATI)[1]: Հարցումը գրանցել է 95% վստահության միջակայք՝ 3,1% սխալի սահմանով՝, ապահովելով ներկայացուցչական արդյունքներ: Ճշգրտության և հուսալիության համար տվյալները մշակվել և վերլուծվել են SPSS-ի միջոցով (մեթոդաբանության լրացուցիչ մանրամասների համար տե՛ս Հավելված 2):

[1] Հայաստանում իրականացված քանակական ուսումնասիրության ընթացքում բոլոր հարցվողները գնահատել են կլիմայի փոփոխության վերաբերյալ իրենց պատկերացումները: Ըստ հարցման արձանագրության, եթե հարցվողը դժվարանում էր գնահատել իր տեղեկացվածությունը կամ այն «շատ վատ» էր, ապա հարցազրույցը դադարեցվում էր, քանի որ նրանց թերի ընկալումը կսահմանափակեր նրանց պատասխանների խորությունը: Նախնական թվի (1,089 հարցվողներից) մոտ 8%-ը կամ 89 անհատներ պատկանում էին այս խմբին և, հետևաբար, բացառվեց հարցազրույցների շարունակելը:

Հարցման արդյունքներ

Հանրության պատրաստվածությունը և պատրաստակամությունը՝ աջակցելու Հայաստանում կանաչ անցման նախաձեռնություններին. ազգային զեկույց

3. Հանրային հարցման արդյունքները

Այս բաժինը ներկայացնում է Հայաստանում կլիմայի փոփոխության, շրջակա միջավայրի պահպանության, էներգետիկ անվտանգության, արդյունավետության և ԵՄ-ի հետ թեմատիկ համագործակցության վերաբերյալ հանրության ընկալումների և վերաբերմունքի մասին հետազոտության արդյունքները: Այն վերաբերվում է իրազեկվածությանը, ներգրավվածությանը և հարակից նախաձեռնություններին աջակցությանը, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանության գործողություններին մասնակցելու առումով ընկալվող խոչընդոտներին: Վերլուծության մեջ ներկայացվում է նաև բնապահպանական քաղաքականության և գործողությունների առաջխաղացման գործում տարբեր դերակատարների արդյունավետության և նրանց դերի վերաբերյալ հասարակական կարծիքը: Բացի այդ՝ այն ընդգծում է կայուն գործելակարգերի և քաղաքականության միջոցով կլիմայի փոփոխության ազդեցություններն ադապտացնելու և մեղմելու վերաբերյալ հանրային տեսակետները:

3.1.Կլիմայի փոփոխության մասին պատկերացումը Հայաստանումպատկերացումը Հայաստանում

Հայաստանում ավելի քան երկու տարի ապրող մարդկանց 55%-ը «չափավոր» է գնահատել կլիմայի փոփոխության մասին իր պատկերացումները, 20%-ը՝ «շատ լավ», 18%-ը՝ «լավ» և 7%-ը՝ «վատ» (Պատկեր 1):

Պատկեր 1. Կլիմայի փոփոխության մասին պատկերացումը Հայաստանում (%) n=1000



Հայաստանում կլիմայի փոփոխության մասին պատկերացման սեգմենտային վերլուծությունը ստորև ցույց է տալիս, թե այնպիսի ժողովրդագրական գործոններ, ինչպիսիք են՝ տարիքը, սեռը, կրթությունը և բնակության վայրը, ինչպես կարող են փոխկապակցված լինել պատկերացման ընկալվող մակարդակների հետ: Դրանց ուսումնասիրությունը կարող է բացահայտել այնպիսի օրինաչափություններ, որոնք հուշում են, թե որտեղ են անհրաժեշտ թիրախային ջանքեր՝ կլիմայի խնդիրների վերաբերյալ հանրային պատկերացումը բարձրացնելու համար:

Կլիմայի փոփոխության մասին պատկերացման սեգմենտային վերլուծությունը՝ ըստ տարիքի

Հայաստանում կլիմայի փոփոխության մասին ընկալվող պատկերացումները չեն համընկնում տարբեր տարիքային խմբերում՝ համահունչ լինելով պատկերացման մակարդակների ընդհանուր բաշխվածությանը (Պատկեր 2):

Պատկեր 2. Կլիմայի փոփոխության մասին ընկալվող պատկերացումը Հայաստանում՝ ըստ տարիքի(%) n=1000



Հայաստանում կլիմայի փոփոխության մասին ընկալվող պատկերացումն ամենաբարձրն է 35-44 տարեկան մարդկանց շրջանում, որոնց 25%-ն իր գիտելիքները գնահատում է «շատ լավ»: Վստահությունը նվազում է ավելի բարձր տարիքային խմբերում, հատկապես՝ 45-54 տարեկանների շրջանում, որոնց 12%-ն իր պատկերացումը գնահատում է «շատ վատ» (Պատկեր 2):

Կլիմայի փոփոխության մասին պատկերացման սեգմենտային վերլուծությունը՝ ըստ սեռի

Կլիմայի փոփոխության մասին պատկերացումը տարբերվում է սեռերի միջև: Տղամարդկանց շրջանում 16%-ն այն գնահատել է «լավ», իսկ 23%-ը՝ «շատ լավ»: Կանանց 19%-ն այն համարում է «լավ», իսկ 18%-ը՝ «շատ լավ» (Պատկեր 3):

Պատկեր 3. Կլիմայի փոփոխության մասին ընկալվող պատկերացումը Հայաստանում՝ ըստ սեռի n=1000



Վերլուծությունը նաև դիտարկում է ամուսնական կարգավիճակի և կլիմայի փոփոխության մասին պատկերացման փոխհարաբերությունները՝ ըստ տարբեր սեռերի: Առաջնահերթ է դիտարկվել այն հարցը, թե արդյոք տղամարդկանց և կանանց համար ամուսնացած լինելը տարբեր կերպ է ազդում կլիմայի փոփոխության մասին իրազեկվածության և գիտելիքների

ընկալվող մակարդակների վրա: Ամուսնացած և ամուրի մարդկանց համեմատելով՝ վերլուծությունը նպատակ ունի հայտնաբերելու ընկալվող պատկերացման տարբերությունները՝ բացահայտելով, թե ինչպես տղամարդկանց և կանանց համար ամուսնական կարգավիճակը կարող է տարբեր կերպ ազդել կլիմայի փոփոխության մասին իրազեկվածության վրա (Աղյուսակ 1):

Աղյուսակ 1. Ամուսնական կարգավիճակը և կլիմայի փոփոխության մասին ընկալվող պատկերացումը Հայաստանում (%) n=1000

Սեռ	Ամուսնական կարգավիճակ	% վատ պատկերացում	չափավոր պատկերացում	% լավ պատկերացում	% շատ լավ պատկերացում
			(% սեռ և ամուսնական կարգավիճակ)		
	Ամուսնացած	59% (9%)	42% (52%)	39% (15%)	50% (24%)
	Ամուսնացած	41% (5%)	58% (58%)	61% (18%)	50% (19%)
			(% սեռ և ամուսնական կարգավիճակ)		
	Ամուրի	70% (5%)	50% (48%)	56% (22%)	71% (25%)
	Ամուրի	30% (3%)	50% (62%)	44% (22%)	29% (13%)

Հայաստանում ամուսնական կարգավիճակը չի ազդում կլիմայի փոփոխության մասին ընկալվող պատկերացման վրա: «Լավ» պատկերացման ընկալումն ամուրի կանանց մոտ 22%-ից նվազում է մինչև 18%՝ ամուսնացած կանանց շրջանում, մինչդեռ «շատ լավ» պատկերացումը 13%-ից հասնում է 19%-ի: «Լավ» պատկերացման ընկալումն ամուրի տղամարդկանց մոտ 22%-ից նվազում է մինչև 15%՝ ամուսնացած տղամարդկանց շրջանում, իսկ «շատ լավ» պատկերացումը մնում է գրեթե անփոփոխ՝ 25%-ից շեղվելով 24%-ի՝ առանց զգալի տարբերությունների սեռերի միջև:

Կլիմայի փոփոխության մասին պատկերացման սեգմենտային վերլուծությունը՝ ըստ կրթության

Զեկույցն ուսումնասիրում է կրթության մակարդակի փոխկապակցվածությունը Հայաստանում կլիմայի փոփոխության մասին ընկալվող պատկերացման հետ՝ գնահատելով, թե արդյոք բարձրագույն կրթությունը տարբեր կերպ է ազդում իրազեկվածության վրա՝ այլ կրթական մակարդակների հետ համեմատ: Հարցվողներին համեմատելով ըստ կրթության տարբեր մակարդակների՝ վերլուծությունը փորձում է պարզել, թե արդյոք գոյություն ունեն էական տարբերություններ ընկալվող պատկերացման մեջ (Աղյուսակ 2):

Աղյուսակ 2. Կրթական մակարդակ և Հայաստանում կլիմայի փոփոխության մասին ընկալվող պատկերացում (%) n=1000

Կրթական մակարդակ	% վատ պատկերացում	% չափավոր պատկերացում	% լավ պատկերացում	% շատ լավ պատկերացում
	(% կրթական մակարդակ)			
Հիմնական կրթություն	1% (1%)	4% (53%)	3% (14%)	7% (32%)
Միջնակարգ կրթություն	21% (5%)	25% (49%)	25% (16%)	41% (30%)
Մասնագիտական կրթություն	9% (3%)	28% (61%)	25% (17%)	24% (19%)
Բուհական աստիճան (բակալավր /մագիստրոս/կամ համարժեք)	68% (11%)	42% (57%)	45% (19%)	26% (13%)
Գիտությունների թեկնածու, դոկտոր կամ համարժեք	1% (8%)	1% (28%)	2% (36%)	2% (28%)

Աղյուսակ 2-ը ցույց է տալիս, որ կլիմայի փոփոխության մասին ընկալվող «լավ» պատկերացում ունեցող անհատների 45%-ն ունի բուհական աստիճան (բակալավրի, մագիստրոսի կամ համարժեք), մինչդեռ ընկալվող «շատ լավ» պատկերացում ունեցողների 41%-ն ունի միջնակարգ կրթություն (Պատկեր 4):

Պատկեր 4. Հայաստանում կլիմայի փոփոխության մասին ընկալվող «լավ» (ձախից, n=187) և «շատ լավ» (աջից, n=205) պատկերացումներով մարդիկ՝ ըստ կրթության (%)



Կրթության ավելի բարձր (բակալավր, մագիստրոս, թեկնածուական կամ համարժեք) մակարդակ ունեցող անձինք կլիմայի փոփոխության մասին իրենց պատկերացումները գնահատել են «լավ» (36% գիտությունների թեկնածուների, դոկտորների կամ համարժեք աստիճան ունեցողների շրջանում)՝ համեմատած հիմնական կրթություն ունեցողների հետ (14%): Այնուամենայնիվ, ավելի հավանական է, որ հիմնական և միջնակարգ կրթություն ունեցողները կլիմայի փոփոխության մասին իրենց պատկերացումներն ընկալեն «շատ լավ» (համապատասխանաբար 32% և 30%)՝ համեմատած բուհական աստիճան ունեցողների (13% բակալավրի, մագիստրոսի կամ համարժեք) և նույնիսկ ասպիրանտների կամ դոկտորների (28%) հետ: (Պատկեր 4.1)

Պատկեր 4.1.Հայաստանում կլիմայի փոփոխության մասին ընկալվող պատկերացումները՝ ըստ կրթության մակարդակի (%)



Կլիմայի փոփոխության մասին պատկերացման սեգմենտային վերլուծությունը՝ ըստ բնակության վայրի

Գյուղական բնակավայրերում կլիմայի փոփոխության մասին իրենց պատկերացումը 15%-ը գնահատում է «լավ», իսկ 25%-ը՝ «շատ լավ»: Վստահությունը մի փոքր ավելի բարձր է քաղաքային բնակավայրերում, որտեղ 20%-ն այն բնութագրել է «լավ», իսկ 23%-ը՝ «շատ լավ»: Մայրաքաղաքում բնակիչների 19%-ը պնդում է, որ «լավ» պատկերացում ունի, իսկ 14%-ն ասում է, որ այն «շատ լավ» է (Պատկեր 5):

Պատկեր 5. Հայաստանում կլիմայի փոփոխության մասին ընկալվող պատկերացումը՝ ըստ բնակության վայրի (%) n=1 000



Կլիմայի փոփոխության մասին ընկալվող պատկերացումները տատանվում են Հայաստանի տարբեր տարածքներում, սակայն մայրաքաղաքի, քաղաքային և գյուղական բնակավայրերի միջև տատանումները վիճակագրորեն աննշան են: (Պատկեր 5)

3.2. Հայաստանում կլիմայի փոփոխության և բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղեկատվության աղբյուրները

Տվյալները ցույց են տալիս, որ Հայաստանում մարդկանց կողմից կլիմայի փոփոխությունը «լավ» կամ «շատ լավ» ընկալելու և բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղեկատվության ազդեցության միջև որևէ կապ չկա: Նրանց մեծամասնությունը՝ կլիմայի փոփոխության մասին իրենց պատկերացումները «լավ» նկարագրողների 74%-ը և «շատ լավ» բնութագրողների 80%-ը հայտնել են, որ վերջին երեք ամսվա ընթացքում բնապահպանական խնդիրների վերաբերյալ որևէ տեղեկատվություն չեն ստացել:

Ընդհանուր առմամբ՝ միայն 26%-ն է հայտնել, որ տեղեկատվություն է ստացել բնապահպանական խնդիրների վերաբերյալ: 271 հարցվածների շրջանում ամենատարածված աղբյուրը Facebook-ն է (մեջբերում տեղեկատվություն ստացողների 57%-ի կողմից), որին հաջորդում են հեռուստատեսությունը (54%) և ընտանիքը, ընկերները, հարևանները կամ գործընկերները (43%): Այլ աղբյուրներից են Instagram-ը (27%) և Telegram-ը (24%): Ավելի քիչ հիշատակվող աղբյուրներն են ռադիոն (8%) և տպագիր մամուլը (5%) (Պատկեր 6):

Պատկեր 6. Հայաստանում բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղեկատվության



Հետաքրքիր է, որ բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն ստացողների 61%-ը հաստատել է, որ արդիական պատկերացում ունի ընթացիկ և գալիք թեմատիկ քաղաքականության մասին հիմնական լրատվամիջոցներում և սոցիալական մեդիայում գովազդների միջոցով (քաղաքականության մասին արդիական տեղեկություններ ունեցողների 68%) կամ մասնակցելով կառավարության (39%) և ՀԿ-ների (21%) կողմից կազմակերպված թեմատիկ միջոցառումներին (հանդիպումներ, կոնֆերանսներ, աշխատաժողովներ, ֆորումներ և այլն):

Հայաստանում բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղեկատվության գլխավոր աղբյուրները և դրանց լսարանը

Այս հատվածը նկարագրում է Հայաստանում բնապահպանական տեղեկատվության գլխավոր երեք աղբյուրները՝ Facebook, հեռուստատեսություն և անձնական շրջապատ (ընտանիք, ընկերներ, հարևաններ կամ գործընկերներ)՝ ըստ լսարանի (Պատկեր 7): Այն ցույց է տալիս, թե որ խմբերն են ապավինում աղբյուրներից յուրաքանչյուրին, ինչը հնարավորություն է տալիս ավելի նպատակաուղղված հաղորդակցմամբ բարձրացնել իրազեկվածության մակարդակը:

Facebook-ը բնապահպանական տեղեկատվության առաջնային աղբյուրն է բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն ստացող գործազուրկների 70%-ի, կանանց 64%-ի, 35-44 տարեկանների 62%-ի, բուհական (բակալավրի, մագիստրոսի կամ համարժեք) աստիճան ունեցողների 60%-ի, միջնակարգ կրթություն ունեցողների 60%-ի, գյուղաբնակների 60%-ի, ամուսնացածների 59%-ի և տղամարդկանց 49%-ի համար:

Հեռուստատեսությունը գրավիչ է բնապահպանական խնդիրների մասին տեղեկատվություն ստացած 65+ տարեկան մարդկանց 93%-ի, մասնագիտական կրթություն ունեցողների 75%-ի, գործազուրկների 72%-ի, գյուղաբնակների 61%-ի, կանանց 59%-ի և տղամարդկանց 49%-ի համար:

Ընտանիքը, ընկերները, հարևանները կամ գործընկերները բնապահպանական խնդիրների վերաբերյալ թեմատիկ տեղեկատվություն են տրամադրում հիմնական կրթություն ունեցողների 59%-ին, 35-54 տարեկանների 53%-ին, ուսանողների 52%-ին, մայրաքաղաքի բնակիչների 50%-ին, ամուրիների 50%-ին և կանանց 49%-ին: (Պատկեր 7)

Պատկեր 7. Հայաստանում բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղեկատվության գլխավոր աղբյուրները և դրանց լսարանը (%) n=271



Բնապահպանական խնդիրների և կլիմայի փոփոխության վերաբերյալ տեղեկատվության հավաստիության չափանիշները

Ինչ վերաբերում է հավաստիությանը, ապա բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղեկատվություն ստացած մարդկանց մեծամասնությունը առաջնահերթ է համարում մասնագիտական կարծիքն ու վերլուծությունը (61%) և վստահելի ու հայտնի աղբյուրները (58%): Փաստերի թափանցիկ, անաչառ ներկայացումը կարևոր է 51%-ի համար, մինչդեռ 33%-ը գնահատում է այն փաստը, որ տեղեկատվությունը ֆինանսավորվել է միջազգային դոնորների կողմից: (Պատկեր 8)

Պատկեր 8. Կլիմայի փոփոխության և բնապահպանական խնդիրների վերաբերյալ տեղեկատվության հավաստիության չափանիշները (%) n=271



3.3. Հայաստանում կլիմայի փոփոխության ազդեցության մասին պատկերացումները

Անձնական շրջապատից բնապահպանական տեղեկատվություն ստացող մարդիկ ավելի շատ են նկատում կլիմայի փոփոխության ազդեցությունն իրենց շուրջը. ընտանիքից, ընկերներից, հարևաններից կամ գործընկերներից տեղեկատվություն ստացողների 86%-ն ասում է, որ կլիմայի փոփոխությունն ազդում է իրենց կամ իրենց շրջապատի վրա: Հայաստանում ճնշող մեծամասնությունը՝ 77%-ը, հաստատում է, որ կլիմայի փոփոխությունն ազդում է անձամբ իրենց կամ ընտանիքի, հարազատների, ընկերների կամ հարևանների վրա: Առավել հաճախ նշվում են անբարենպաստ ազդեցությունն առողջության վրա (մեջբերում տուժածների 90%-ի կողմից), եղանակային փոփոխությունների հետևանքով առօրյա կյանքի վրա բացասական ազդեցությունը (77%), բնական աղետների պատճառով խափանումները (70%), տնտեսական ազդեցությունը (61%) և շրջակա միջավայրի գործոնների պատճառով տեղահանումը (43%): (Պատկեր 9)

Հաշվի առնելով վիճակագրորեն աննշան ժողովրդագրական տարբերությունները, որոնք վերաբերում են եղանակային փոփոխությունների հետևանքով առօրյա կյանքի վրա բացասական ազդեցությանը, բնական աղետների պատճառով խափանումներին կամ շրջակա միջավայրի գործոնների պատճառով տեղահանմանը, այս գլխի թիրախում են անբարենպաստ ազդեցությունն առողջության վրա և բացասական տնտեսական հետևանքները:

Պատկեր 9. Հայաստանում կլիմայի փոփոխության ամենաշատ նշվող բացասական ազդեցությունները (%) n=771



Կլիմայի փոփոխության պատճառով անբարենպաստ ազդեցությունն առողջության վրա՝ ըստ տարիքի, սեռի և բնակության վայրի

Կլիմայի փոփոխության պատճառով տուժած 771 հարցվածների 90%-ը (691 մարդ) նշել է անբարենպաստ ազդեցությունն առողջության վրա: Ըստ տարիքի, սեռի և բնակության վայրի ուսումնասիրությունները ցույց են տալիս, թե ինչպես են տարբեր խմբերը Հայաստանում ընկալում այս ազդեցություններն առողջության վրա:

Կլիմայի փոփոխության պատճառով անձամբ իրենց կամ անմիջական սոցիալական շրջապատի (ընտանիքի, հարազատների, ընկերների, հարևանների կամ այլոց) առողջության վրա բացասական ազդեցությունն ընկալողների տոկոսն աճում է տարիքի հետ՝ տատանվելով 16-24 տարեկանների շրջանում 84%-ից մինչև 99%՝ 65+ տարեկան մարդկանց շրջանում: Միևնույն ժամանակ, ամենաերիտասարդ խումբը՝ 16-24 տարեկան, ներկայացնում է նման ազդեցությունների մասին հաղորդողների ամենափոքր մասը (12%), մինչդեռ 35-44 և 65+ տարեկան անհատները կազմում են ամենամեծ խմբերը (համապատասխանաբար 20% և 19%): (Պատկերներ 10 և 11)

Պատկեր 10. Անձամբ իրենց կամ սոցիալական շրջապատի առողջության վրա ազդող անբարենպաստ ազդեցության մասին հաղորդող խմբերը՝ ըստ տարիքի (%) n=691



Պատկեր 11. Կլիմայի փոփոխության պատճառով հաղորդած բացասական առողջական ազդեցությունը՝ ըստ տարիքի (%) n=691



Ավելին՝ նկատելի գենդերային տարբերություններ են ի հայտ գալիս՝ կլիմայի փոփոխության պատճառով առողջական բացասական ազդեցությունների մասին հաղորդումների առումով: Հայաստանում կանայք ավելի հաճախ են հայտնում, որ կլիմայի փոփոխությունը բացասաբար է անդրադառնում անձամբ իրենց կամ անմիջական սոցիալական շրջապատի առողջության վրա (կլիմայի փոփոխության պատճառով բացասական ազդեցությունն ընդունող կանանց 93%-ը՝ համեմատած տղամարդկանց 87%-ի հետ), և նրանք հաղորդում են դրա մասին ավելի հաճախ, քան տղամարդիկ (նման ազդեցության մասին հաղորդողների 58%-ը կանայք են):

Քանի որ 691 անձ հայտնել է առողջության վրա ազդեցությունների մասին՝ կենտրոնանալով,օրինակ, օդի աղտոտվածության հետևանքով առաջացած շնչառական խնդիրների վրա, իսկ հարցման ընդհանուր մասնակիցների 20%-ն օդի որակի բարելավումը

դասել է որպես Հայաստանի առաջնային բնապահպանական առաջնահերթություն, ապա կարևոր է հետազոտել, թե ինչպես են այդ առողջական խնդիրները տատանվում տարբեր տեսակի բնակավայրերի միջև (Պատկերներ 12 և 13): Դա հատկապես տեղին է՝ հաշվի առնելով, որ օդի աղտոտվածության մակարդակը սովորաբար ավելի բարձր է մայրաքաղաքներում, քան գյուղական վայրերում:

Հայաստանի քաղաքային, գյուղական բնակավայրերի և մայրաքաղաքի բնակիչները հավասարապես հայտնել են, որ կլիմայի փոփոխությունը բացասաբար է անդրադառնում անձամբ իրենց կամ անմիջական սոցիալական շրջապատի առողջության վրա, ընդ որում՝ որպես օրինակ հաճախ բերվում են օդի աղտոտվածությունից առաջացած շնչառական խնդիրները: Բացի այդ՝ մայրաքաղաքի և այլ քաղաքների բնակիչները մեծամասնություն են կազմում (65%. 38% մայրաքաղաքից և 27% տարբեր քաղաքներից) այն մարդկանց շրջանում, որոնք նշում են կլիմայի փոփոխության բացասական ազդեցությունն անձամբ իրենց, իրենց ընտանիքի անդամների, ընկերների, հարևանների, գործընկերների և այլոց առողջության վրա: (Պատկերներ 12 և 13)

Պատկեր 12. Անձամբ հարցվողների կամ իրենց սոցիալական շրջապատի առողջության վրա ազդող անբարենպաստ ազդեցության մասին հաղորդումները՝ ըստ բնակության վայրի (%) n=691



Պատկեր 13. Անձամբ իրենց կամ սոցիալական շրջապատի առողջության վրա ազդող անբարենպաստ ազդեցության մասին հաղորդող խմբեր (%) n=691



Կլիմայի փոփոխության պատճառով բացասական տնտեսական ազդեցության ընկալումը՝ ըստ բնակության վայրի և զբաղվածության կարգավիճակի

Կլիմայի փոփոխության պատճառով անձամբ իրենց կամ անմիջական սոցիալական շրջապատի վրա ընդհանուր բացասական ազդեցությունը հաստատող մարդկանց 61%-ը հայտնել է բացասական տնտեսական ազդեցությունների մասին: Ըստ բնակության վայրի և զբաղվածության կարգավիճակի վերլուծությունը ցույց է տալիս, թե կլիմայի փոփոխության պատճառով որ խմբերն են իրենց ավելի խոցելի ընկալում ֆինանսական հետևանքների նկատմամբ:

Գյուղաբնակները, կախված լինելով գյուղատնտեսությունից, հատկապես խոցելի են կլիմայով պայմանավորված տնտեսական ազդեցությունների նկատմամբ, որոնք կազմում են կլիմայի փոփոխության պատճառով նման ազդեցությունների մասին հաղորդողների 30%-ը (Պատկեր 14), իսկ գյուղաբնակների 70%-ը կարևորում է այնպիսի խնդիրներ, ինչպիսիք են՝ հողի դեգրադացումը և անբավարար արոտավայրերը: Ի հակադրություն՝ քաղաքների և մայրաքաղաքի բնակիչները, կազմելով տուժածների 70%-ը (համապատասխանաբար 27% և 43%), որպես իրենց տնտեսական մտահոգություն՝ հիմնականում նշում են ջեռուցման և հովացման ծախսերի աճը: Բնապահպանական խնդիրների պատճառով օդորակման/ջեռուցման ծախսերի ավելացմանը բախվելու մասին պնդող մարդկանց շրջանում քաղաքաբնակները կազմում են 79% (45%-ը մայրաքաղաքից, 34%-ը՝ այլ քաղաքներից):

Պատկեր 14. Կլիմայի փոփոխության պատճառով բացասական տնտեսական ազդեցության մասին հաղորդող խմբերը՝ ըստ բնակության վայրի (%) n=453



Կլիմայի փոփոխության պատճառով բացասական տնտեսական ազդեցությունների մասին հաղորդողների մեծամասնությունը (59%) կազմում են աշխատող անձինք: Այն մարդկանց շրջանում, որոնք գիտակցում են կլիմայի փոփոխության պատճառով ընդհանուր բացասական ազդեցությունը, թոշակառուների 75%-ը նշում է տնտեսական հետևանքները, որին հաջորդում են գործազուրկների 67%-ը, ինքնազբաղվածների 62%-ը, աշխատողների 56%-ը և ուսանողների 43%-ը: (Պատկերներ 15 և 16)

Պատկեր 15. Կլիմայի փոփոխության պատճառով բացասական տնտեսական ազդեցության մասին հաղորդումներն ըստ զբաղվածության կարգավիճակի (%) n=453



Պատկեր 16. Կլիմայի փոփոխության պատճառով բացասական տնտեսական ազդեցության մասին հաղորդող խմբերն ըստ զբաղվածության աստիճանի (%) n=453



Հայաստանում կլիմայի փոփոխության պատճառով ամենատուժած խմբերը և նրանց ընկալվող խոցելիությունը

Արդյունավետ ռազմավարություն մշակելու համար կարևոր է հասկանալ, թե որ խմբերն են առավել շատ տուժում կլիմայի փոփոխությունից, և այն համեմատել իրենց խոցելիության մասին հանրային ընկալումների հետ: Հարցումը դիտարկում է, թե ինչպես են տարբեր ժողովրդագրական խմբեր հաղորդում կլիմայի փոփոխության պատճառով բացասական ազդեցությունների մասին և դրանք հակադրում առավել խոցելի խմբերի վերաբերյալ հանրային տեսակետներին:

Պատկեր 17. Կլիմայի փոփոխությունից/բնապահպանական խնդիրներից տուժած խմբեր և իրենց ընկալվող խոցելիությունը (%) n=1,000



Հայաստանում կլիմայի փոփոխության պատճառով ամենախոցելի ընկալվող խմբերը (նշված՝ ըստ հերթականության) երեխաներն են (ամենախոցելի է համարվում հարցվածների 35%-ի կողմից), սոցիալապես անապահով անձինք (20%) և տարեցները (17%): Այնուամենայնիվ, զգալի տարբերություն կա առավել խոցելի ընկալվող անձանց և կլիմայի փոփոխության պատճառով ազդեցության մասին հաղորդող խմբերի միջև: Թեև կանայք հաճախ են հայտնում անձամբ իրենց և անմիջական սոցիալական շրջապատի վրա կլիմայի փոփոխության պատճառով ազդեցության մասին, սակայն Հայաստանում հանրությունը նրանց չի ընկալում որպես ամենախոցելի: Նմանապես, չնայած 55 և ավելի բարձր տարիքի շատ անհատներ հաղորդում են ազդեցության մասին (55+ տարեկանների 76%-ը), այս խումբն ամենախոցելին է ճանաչվում հարցվածների միայն 17%-ի կողմից: Գյուղական և քաղաքային բնակիչները նույնպես հաղորդում են էական ազդեցության մասին (76% և 78%, համապատասխանաբար), սակայն նրանք հազվադեպ են դիտվում որպես ամենախոցելիները (յուրաքանչյուրը խումբը նկարագրվում է որպես ամենախոցելի ընդամենը 9%-ի կողմից): (Պատկերներ 17 և 18)

Պատկեր 18. Կլիմայի փոփոխության և բնապահպանական խնդիրների նկատմամբ առավել խոցելի խմբերի հանրային վարկանիշները (%) n=1000



3.4. Կլիմայի փոփոխության արմատական պատճառների ընկալումը Հայաստանում

Հարցման մասնակիցներին խնդրել են նշել, թե որն է իրենց կարծիքով կլիմայի փոփոխության առաջնային պատճառը: Որպես արմատական պատճառ՝ մարդկանց 25%-ը նշել է մարդկային գործունեությունը, 26%-ը դա վերագրել է բացառապես բնական գործընթացներին, իսկ 46%-ը կարծում է, որ և՛ մարդկային գործունեությունը, և՛ բնական գործընթացներն առաջացնում են կլիմայի փոփոխություն (Պատկեր 19):

Պատկեր 19. Կլիմայի փոփոխության արմատական պատճառների ընկալումը Հայաստանում (%) n=1000



Մարդկային գործունեությամբ պայմանավորված կլիմայի փոփոխության պատճառների ընկալումը Հայաստանում

Մարդկային գործունեությունը կամ մարդկային գործունեության ու բնական գործընթացների համակցությունը որպես կլիմայի փոփոխության պատճառ նշած 728 հարցվածների շրջանում առավել հաճախ հիշատակված պատճառներն են տրանսպորտային արտանետումները (86%), բնության ավերածությունները (83%), թափոնների վատ կառավարումն ու չարտոնված աղբաթափությունը (83%), անտառահատումները (82%), արդյունաբերական և

գյուղատնտեսական գործունեությունից բխող ջերմոցային գազերի արտանետումները (78%), բրածո վառելիքի օգտագործումը (69%) և ոչ էներգաարդյունավետ գործելակարգերը (56%): Հետաքրքիր է, որ մարդկային գործունեությամբ պայմանավորված «պատերազմներն ու ռազմական գործողությունները» Հայաստանում հարցվածների 8%-ն ընդունել է որպես կլիմայի փոփոխության արմատական պատճառ:

Մարդկային գործունեությամբ պայմանավորված կլիմայի փոփոխության արմատական պատճառների մասին գյուղական, քաղաքային և մայրաքաղաքի բնակիչների պատկերացումները հասկանալը կարևոր է, քանզի նրանց տեսակետները կարող են տարբերվել՝ ելնելով յուրահատուկ բնապահպանական համատեքստից և նրանց ամենօրյա փորձից (Պատկեր 20):

Պատկեր 20. Մարդկային գործունեությամբ պայմանավորված կլիմայի փոփոխության արմատական պատճառների ընկալումը Հայաստանում (%) n=728



Տրանսպորտային արտանետումները Հայաստանում մարդկային գործունեությամբ պայմանավորված կլիմայի փոփոխության ամենաճանաչված պատճառն են, որը նշել են մայրաքաղաքի բնակիչների 89%-ը, քաղաքաբնակների 88%-ը և գյուղաբնակների 81%-ը:

Ոչ էներգաարդյունավետ գործելակարգերը մարդկային գործունեությամբ պայմանավորված կլիմայի փոփոխության ամենաքիչ ճանաչված պատճառներից են, որը նշել են մայրաքաղաքի բնակիչների 58%-ը, գյուղաբնակների 56%-ը և քաղաքաբնակների 53%-ը: (Պատկեր 20)

3.5. Հայաստանում բնապահպանական խնդիրների և շրջակա միջավայրի պահպանության առաջնահերթ ոլորտների վերաբերյալ հանրային ընկալումները

Այս ենթագլուխը վերլուծում է Հայաստանում բնապահպանական խնդիրների և շրջակա միջավայրի պահպանության առաջնահերթ ոլորտների վերաբերյալ հանրային ընկալումները՝ տեղեկություններ տրամադրելով արդյունավետ քաղաքականության և ռազմավարության մշակման համար, որոնք անդրադառնում են աառաջնայինմտահոգություններին: Հետևյալ բաժիններն ուսումնասիրում են, թե ինչպես են բնակիչներն ընկալում առօրյա մարտահրավերները, ինչպիսիք են՝ օդի աղտոտվածությունը, թափոնների կառավարումը կամ ջրի որակը: Ուսումնասիրելով շրջակա միջավայրի պահպանության հարցում հանրային առաջնահերթությունները՝ այս բաժինը բացահայտում է այն ոլորտները, որոնք առավել հրատապ են համարվում քաղաքականության միջամտության տեսանկյունից: Ավելին՝ այն հետազոտում է մարդկանց՝ շրջակա միջավայրի խնդիրների ազդեցությանը ենթարկվելու և շրջակա միջավայրի պահպանության համապատասխան ոլորտների առաջնահերթության միջև կապը՝ արժեքավոր պատկերացումներ ապահովելով ունեցած փորձառության և առաջնահերթությունների միջև կապի վերաբերյալ:

Բնապահպանական հրատապ խնդիրներ, որոնք ազդում են Հայաստանում մարդկանց առօրյա կյանքի վրա

Բնապահպանական խնդիրների ազդեցությունն առօրյա կյանքի վրա հասկանալու համար հարցվողները նշել են կոնկրետ ոլորտներ, որոնց ազդեցությունը զգացել են: Հարցման արդյունքում նախանշվել է մարտահրավերների լայն շրջանակ, որոնց մարդիկ բախվում են Հայաստանում բնապահպանական խնդիրների պատճառով (Պատկեր 21):

Հանրային հարցման համաձայն՝ մարդիկ կարծում են, որ սննդամթերքի որակի վատթարացումը, գյուղատնտեսական խնդիրներն ու շրջակա միջավայրի գործոններով պայմանավորված առողջական խնդիրները հանդիսանում են երեք գլխավոր բնապահպանական հիմնախնդիրները Հայաստանում:

Գյուղական բնակավայրերում մարդկանց 70%-ը հայտնել է գյուղատնտեսական խնդիրների մասին, 66%-ը նշել է էլեկտրաէներգիայի անջատումները, իսկ 65%-ը մտահոգված է սննդի որակով: Սննդամթերքի սակավությունն ազդել է 57%-ի վրա, թափոնների ոչ պատշաճ կառավարումը զբոսաշրջային վայրերում մտահոգել է 53%-ին, իսկ մնասատուների ու վայրի բնության պատճառով անհարմարություններ է զգացել 53%-ը:

Բոլոր ոլորտներում հարցվածների միայն 4%-ն է նշել, որ բնապահպանական խնդիրները չեն ազդել իրենց առօրյա կյանքի վրա:

Քաղաքային բնակավայրերում 65%-ն առանձնացրել է գյուղատնտեսական խնդիրները, 61%-ը մտահոգված է սննդամթերքի որակով, իսկ 56%-ը նշել է առողջական խնդիրները՝ կապված օդի որակի հետ: Թափոնների ոչ պատշաճ կառավարումը մտահոգել է 51%-ին, իսկ 50%-ը նշել է էլեկտրաէներգիայի անջատումները:

Մայրաքաղաքում 73%-ը նշել է օդի վատ որակի պատճառով առողջական խնդիրները, 70%-ը մտահոգված է սննդամթերքի որակով, իսկ 61%-ը՝ մասնավոր հատվածի՝ շրջակա միջավայրի վրա ունեցած բացասական ազդեցությամբ:

Պատկեր 21. Առօրյա կյանքի ոլորտները Հայաստանում բնապահպանական խնդիրների ազդեցության ներքո (%) n=1,000



Հայաստանում շրջակա միջավայրի պահպանության առաջնահերթ ոլորտները

Հանրության վրա ամեն օր ազդող բնապահպանական խնդիրները բացահայտելուց հետո կարևոր է հասկանալ, թե ինչպես են այդ մտահոգությունները համընկնում շրջակա միջավայրի պահպանության նշված առաջնահերթ ոլորտների հետ: Այդ ոլորտները ներառում են օդի որակի բարելավումը, մաքուր ջրի և ջրահեռացման հասանելիությունը, կենսաբազմազանության և կանաչ տարածքների պահպանումը, տրանսպորտային արտանետումների կրճատումը, թափոնների կառավարման բարելավումը և տարբեր բնագավառներում բնապահպանական կանոնակարգերի և համապատասխանության ամրապնդումը (Պատկեր 22):

Figure 22. Priority areas of environmental protection as ranked by the public in Armenia (%).
1= Highest Priority, 6 = Lowest Priority. n=1000.



Հայաստանում հանրության գլխավոր բնապահպանական առաջնահերթությունները հետևյալն են՝ [1] մաքուր ջրի և ջրահեռացման մշտական հասանելիություն, [2] կենսաբազմազանության և կանաչ տարածքների պահպանում, [3] տրանսպորտային արտանետումների կրճատում, [4] թափոնների կառավարման բարելավում, [5] բնապահպանական կանոնակարգերի հզորացում և [6] օդի որակի բարելավում: (Պատկեր 22)

3.6. Շրջակա միջավայրի պահպանության գործում տարբեր դերակատարների ընկալվող կարևորությունն ու արդյունավետությունը

Հարցման մասնակիցները գնահատել են տարբեր դերակատարների կարևորությունն ու արդյունավետությունը շրջակա միջավայրի պահպանության գործողությունների, ծրագրերի կամ կանոնակարգերի իրականացման գործում՝ 1-ից (բոլորովին ոչ կարևոր/արդյունավետ) մինչև 5-ը (չափազանց կարևոր/արդյունավետ) սանդղակով: Ընկալվող ընդհանուր կարևորությունը (ԸԸԿ, POI) և արդյունավետությունը (ԸԸԱ, POE) հիմնված են թվաբանական միջինների վրա՝ որոշելու համար, թե Հայաստանում հանրությունը որ սուբյեկտներն է առավել ազդեցիկ համարում բնապահպանական գործունեության իրականացման գործում (Պատկեր 23):

Հայաստանում հանրությունը կրթական հաստատությունները համարում է շրջակա միջավայրի պահպանության գործում ամենակարևոր ու արդյունավետ սուբյեկտները: Կենտրոնական իշխանությունը համարվում է երկրորդ ամենակարևոր սուբյեկտը, կրոնական հաստատություններն ընկալվում են ամենաքիչ կարևորը, իսկ մասնավոր հատվածը՝ ամենաքիչ արդյունավետը: (Պատկեր 23)

Պատկեր 23. Հայաստանում տարբեր դերակատարների ընկալվող ընդհանուր կարևորությունն ու արդյունավետությունը n=1000



Շրջակա միջավայրի պահպանության գործում կենտրոնական իշխանության ընկալվող ընդհանուր կարևորությունն ու արդյունավետությունը

Կենտրոնական իշխանությունն ընկալվում է որպես «շատ կարևոր» դերակատար շրջակա միջավայրի պահպանության գործում (POI=4.3 է 5-ից), ընդ որում՝ հարցվածների 63%-ը գնահատում է դրա դերը «չափազանց կարևոր», իսկ 10%-ը՝ «շատ կարևոր»: Այնուամենայնիվ, հարցվածների միայն 28%-ն է այն համարում «չափազանց արդյունավետ», մինչդեռ 15%-ը համարում է «բացարձակապես անարդյունավետ» (Պատկեր 24): Այս անհավասարությունն արտահայտվում է ընկալվող ընդհանուր կարևորության (POI=4.24 է 5-ից) և ընկալվող ընդհանուր արդյունավետության (POE=3.3 է 5-ից) գնահատականներում: Հատկանշական է, որ մասնակիցների 20%-ը նշում է «չափազանց մեծ հավանականություն», իսկ 8%-ը՝ «մեծ հավանականություն», որ կաջակցեն կենտրոնական իշխանության կողմից ներդրված նոր թեմատիկ քաղաքականությանը:

Պատկեր 24. Շրջակա միջավայրի պահպանության գործում կենտրոնական իշխանության կարևորության (ձախ) և արդյունավետության (աջ) վերաբերյալ հանրության գնահատականները Հայաստանում (%) n=1,000



Շրջակա միջավայրի պահպանության գործում տեղական ինքնակառավարման մարմինների ընկալվող ընդհանուր կարևորությունն ու արդյունավետությունը

Հայաստանում շրջակա միջավայրի պահպանության գործում հանրությունը տեղական ինքնակառավարման մարմինները դիտարկում է «շատ կարևոր» (POI=3.97 է 5-ից) և «չափավոր արդյունավետ» (POE=3.2 է 5-ից): Հատկանշական է, որ մայրաքաղաքում մարդկանց 52%-ը դրանք համարում է «չափազանց կարևոր»՝ համեմատած գյուղական բնակավայրերում 42%-ի հետ (ընդհանուր առմամբ 47%՝ ներառյալ քաղաքային բնակավայրերը): Մինչդեռ (ընդհանուր) միայն 23%-ն է համարում դրանք «չափազանց արդյունավետ»: (Պատկեր 25)

Պատկեր 25. Շրջակա միջավայրի պահպանության գործում տեղական ինքնակառավարման մարմինների կարևորության (ձախ) և արդյունավետության (աջ) վերաբերյալ հանրության գնահատականները Հայաստանում (%) n=1000



Շրջակա միջավայրի պահպանության գործում մասնավոր հատվածի ընկալվող ընդհանուր կարևորությունն ու արդյունավետությունը

Հայաստանում շրջակա միջավայրի պահպանության գործում հանրությունը մասնավոր հատվածը համարում է «չափավոր» կարևոր և արդյունավետ (POI=3.39 է 5-ից, POE=2.96 է 5-ից): Այն «չափազանց կարևոր» է 26%-ի համար և «չափազանց արդյունավետ»՝ 15%-ի համար (Պատկեր 26): Հատկանշական է, որ Հայաստանում 17%-ը նշում է «չափազանց մեծ հավանականություն», իսկ 11%-ը՝ «մեծ հավանականություն», որ կաջակցեն կորպորատիվ կայունության նախաձեռնություններին:

Պատկեր 26. Շրջակա միջավայրի պահպանության գործում մասնավոր հատվածի կարևորության (ձախ) և արդյունավետության (աջ) վերաբերյալ հանրության գնահատականները Հայաստանում (%) n=1000



Շրջակա միջավայրի պահպանության գործում հիմնական լրատվամիջոցների ընկալվող ընդհանուր կարևորությունն ու արդյունավետությունը

Հայաստանում շրջակա միջավայրի պահպանության գործում հանրությունը հիմնական լրատվամիջոցները՝ ներառյալ հեռուստատեսությունը, ռադիոն և մամուլը, համարում է «չափավոր» և «շատ» կարևոր/արդյունավետ կատեգորիայի միջև (POI=3.63 է 5-ից, POE=3.36 է 5-ից), ընդ որում՝ հարցվածների 40%-ը դրանք գնահատում է «չափազանց կարևոր», իսկ 26%-ը՝ «չափազանց արդյունավետ»: (Պատկեր 27)

Պատկեր 27. Շրջակա միջավայրի պահպանության գործում հիմնական լրատվամիջոցների կարևորության (ձախ) և արդյունավետության (աջ) վերաբերյալ հանրության գնահատականները Հայաստանում (%) n=1,000





Շրջակա միջավայրի պահպանության գործում միջազգային համայնքի և դոնոր կազմակերպությունների ընկալվող ընդհանուր կարևորությունն ու արդյունավետությունը

Պատկեր 28. Շրջակա միջավայրի պահպանության գործում միջազգային համայնքի և դոնոր կազմակերպությունների կարևորության (ձախ) և արդյունավետության (աջ) վերաբերյալ հանրության գնահատականները Հայաստանում (%) n=1,000





Միջազգային համայնքը և դոնոր կազմակերպությունները կարևոր դեր են խաղում Հայաստանում շրջակա միջավայրի պահպանության գործում, որոնց ընկալվող կարևորության (POI) վարկանիշը կազմում է 3.62, իսկ ընկալվող արդյունավետության (POE) վարկանիշը 3.38 է՝ 5-ից: Հատկանշական է, որ հանրության 32%-ը դրանք համարում է «չափազանց կարևոր», իսկ 22%-ը՝ «չափազանց արդյունավետ»: (Պատկեր 28):

Պատկեր 29. Հայաստանում բնապահպանական քաղաքականության վրա ԵՄ համագործակցության ազդեցության մասին հանրային (%) n=1,000



Պատկեր 30. Հայաստանին ԵՄ-ան թեմատիկ աջակցության մասին ընկալվող ուղիները (%) n=867



Շրջակա միջավայրի պահպանության գործում հասարակական կազմակերպությունների (ՀԿ) ընկալվող ընդհանուր կարևորությունն ու արդյունավետությունը

Հայաստանում շրջակա միջավայրի պահպանության գործում հանրությունը հասարակական կազմակերպություններին (ՀԿ) դիտարկում է որպես «չափավոր կարևոր» (POI=3.58 է 5-ից) և «չափավոր արդյունավետ» (POE=3.32 է 5-ից): Թեև 33%-ը ՀԿ-ներին համարում է «չափազանց կարևոր», իսկ 22%-ը՝ «չափազանց արդյունավետ» (Պատկեր 31), միայն 13%-ն է նշում «չափազանց մեծ հավանականություն» և 9%-ը՝ «մեծ հավանականություն», որ կաջակցեն ՀԿ-ների գլխավորած թեմատիկ նախաձեռնություններին:

Պատկեր 31. Շրջակա միջավայրի պահպանության գործում հասարակական կազմակերպությունների կարևորության (ձախ) և արդյունավետության (աջ) վերաբերյալ հանրության գնահատականները Հայաստանում (%) n=1,000





Շրջակա միջավայրի պահպանության գործում կրթական հաստատությունների ընկալվող ընդհանուր կարևորությունն ու արդյունավետությունը

Պատկեր 32. Շրջակա միջավայրի պահպանության գործում կրթական հաստատությունների կարևորության (ձախ) և արդյունավետության (աջ) վերաբերյալ հանրության գնահատականները Հայաստանում (%) n=1,000





Հարցվածների 65%-ը կրթական հաստատությունները՝ ներառյալ դպրոցները և համալսարանները, գնահատել է «չափազանց կարևոր», իսկ 43%-ը՝ «չափազանց արդյունավետ» (Պատկեր 32), բնապահպանական գործունեության իրականացման գործում դրանք համարվում են «շատ կարևոր» (POI=4.32 է 5-ից) և «շատ արդյունավետ» (POE=3.85 է 5-ից): Հատկանշական է, որ 40%-ը նշում է «չափազանց մեծ հավանականություն», իսկ 14%-ը՝ «մեծ հավանականություն», որ կաջակցեն թեմատիկ կրթական ծրագրերին և տեղեկատվական արշավներին:

Շրջակա միջավայրի պահպանության գործում կամավորների, երիտասարդների և ակտիվիստների ընկալվող ընդհանուր կարևորությունն ու արդյունավետությունը

Շրջակա միջավայրի պաշտպանության գործում կամավորների, երիտասարդների և ակտիվիստների դերի առումով, հանրության ընկալումներով նրանք դիտարկվում են «շատ կարևոր (POI=3.96 է 5-ից), իսկ արդյունավետությունը գնահատվում է գրեթե «շատ արդյունավետ» (POE=3.8 է 5-ից): Հարցվածների 46%-ը համարում է այս խմբերը «չափազանց կարևոր», իսկ 39%-ը՝ «չափազանց արդյունավետ» (Պատկեր 33): Հատկանշական է, որ 55-64 տարեկան մարդկանց 54%-ը կամավորներին, երիտասարդներին և ակտիվիստներին համարում է «չափազանց կարևոր»: Ի հակադրություն՝ նրանց «չափազանց կարևոր» գնահատող հարցվածների ամենափոքր տոկոսը պատկանում է 16-24 տարիքային խմբին (44%):

Պատկեր 33. Շրջակա միջավայրի պահպանության գործում կամավորների, երիտասարդների և ակտիվիստների կարևորության (ձախ) և արդյունավետության (աջ) վերաբերյալ հանրության գնահատականները Հայաստանում (%) n=1,000





Շրջակա միջավայրի պահպանության գործում կրոնական հաստատությունների ընկալվող ընդհանուր կարևորությունն ու արդյունավետությունը

Հայաստանում բնապահպանական գործունեության իրականացման գործում կրոնական հաստատությունները հանրության կողմից դիտարկվում են «չափավոր կարևոր» (POI=2.93 է 5-ից) և «չափավոր արդյունավետ» (POE=2.99 է 5-ից): Մասնավորապես՝ 24%-ը գնահատում է դրանց դերը «չափազանց կարևոր», իսկ 21%-ը՝ «չափազանց արդյունավետ»: (Պատկեր 34)

Պատկեր 34. Շրջակա միջավայրի պահպանության գործում կրոնական հաստատությունների կարևորության (ձախ) և արդյունավետության (աջ) վերաբերյալ հանրության գնահատականները Հայաստանում (%) n=1,000



3.7. Անձնական ներգրավվածություն շրջակա միջավայրի պահպանության գործում Հայաստանում

Հարցման մասնակիցներն արձագանքել են, թե արդյոք ներգրավված են շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված միջոցառումներում, ինչպիսիք են՝ վերամշակումը կամ թափոնների կրճատումը: Արդյունքները հնարավորություն են տալիս պատկերացում կազմել շրջակա միջավայրի պահպանությանն ուղղված անհատական հանձնառությունների մասին, ընդ որում՝ հարցվածների 22%-ը հայտնել է, որ մասնակցել է նման միջոցառումներին: Տարբեր ժողովրդագրական խմբերի ներգրավվածության ուսումնասիրությունն արժեքավոր է, որը կարևորում է տարբեր խմբերի կողմից բնապահպանական պատասխանատվության գիտակցումը:

Բնապահպանական գործունեության մեջ ներգրավվածությունը ցույց է տալիս, որ տղամարդիկ ավելի ակտիվ են (25%), քան կանայք (19%). նման գործունեություն ծավալող մասնակիցների 52%-ը տղամարդիկ են:

Տարիքային խմբերն ուսումնասիրելիս պարզ է դառնում, որ 16-24 տարեկանները ցուցաբերում են ամենաբարձր ներգրավվածությունը՝ կազմելով 28%, որին հաջորդում են 25-34 տարեկանները՝ 27%, իսկ 35-44 տարեկանները՝ 24%: Համեմատության համար 65+ տարեկան մարդիկ հայտնում են ներգրավվածության ամենացածր մակարդակի մասին՝ 10%: Ամենամեծ խումբը ներկայացնում են 25-34 տարեկան մարդիկ (24%) (Պատկերներ 35 և 36):

Պատկեր 35. Հայաստանում բնապահպանական գործունեության մեջ նշած ներգրավվածությունն ըստ տարիքի (%) n=231



Պատկեր 36. Բնապահպանական գործունեության մեջ ներգրավված անձանց խմբերն ըստ տարիքի (%) n=231



Գիտությունների թեկնածու, դոկտոր կամ համարժեք գիտական աստիճան ունեցողներն ամենաակտիվն են՝ ցուցաբերելով 31% մասնակցության մակարդակ շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող միջոցառումներին: Բուհական աստիճան (բակալավրի, մագիստրոսի կամ համարժեք) ունեցող մասնակիցների ներգրավվածության մակարդակը կազմում է 22%, որոնց հաջորդում են մասնագիտական կրթություն ունեցողները՝ 18%: Հետաքրքիր է, որ միջնակարգ կրթություն ունեցող անձինք ունեն 22% մասնակցության մակարդակ, մինչդեռ հիմնական կրթությամբ հարցվողները նշում են երկրորդ ամենաբարձր մակարդակը՝ 29% (Պատկեր 37):

Թեև շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող գործողություններում ներգրավվածությունը տատանվում է, սակայն բուհական աստիճան (բակալավրի, մագիստրոսի կամ համարժեք) ունեցող անձինք ներկայացնում են նման գործունեությամբ զբաղվողների ամենամեծ խումբը՝ կազմելով 41% (Պատկեր 38):

Պատկեր 37. Հայաստանում բնապահպանական գործունեության մեջ նշած ներգրավվածությունն ըստ կրթության (%) n=231



Պատկեր 38. Բնապահպանական գործունեության մեջ ներգրավված անձանց խմբերն ըստ կրթության (%) n=231



Շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող միջոցառումներում քաղաքային բնակիչները ցուցաբերում են ներգրավվածության ամենաբարձր մակարդակը՝ 27%,, որին հաջորդում են գյուղաբնակները (20%): Նման գործողություններում մայրաքաղաքի բնակիչներն ունեն ներգրավվածության ամենացածր մակարդակը՝ 19%: Երբ դիտարկվում է շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող միջոցառումներում իրենց մասնակցության մասին հայտնող մարդկանց կազմը, քաղաքային բնակիչները ներկայացնում են ամենամեծ խումբը (67%) (Պատկեր 39 և 40):

Պատկեր 39. Հայաստանում բնապահպանական գործունեության մեջ նշած ներգրավվածությունն ըստ բնակության վայրի (%) n=231



Պատկեր 40. Բնապահպանական գործունեության մեջ ներգրավված անձանց խմբերն ըստ բնակության վայրի (%) n=231



Ընտանեկան կարգավիճակը հետաքրքիր օրինաչափություններ է բացահայտում՝ կապված շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող միջոցառումների հետ: Թեև շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող միջոցառումներում ներգրավվածներից ամուսնացած անձինք կազմում են մեծամասնությունը (58%), սակայն նրանց ներգրավվածության մակարդակը (20%) երրորդ տեղում է՝ քաղաքացիական միության մեջ գտնվողներից (43%) և ամուրիներից (28%) հետո (Պատկերներ 41 և 42):

Պատկեր 41. Շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող միջոցառումներում ներգրավվածությունն ըստ ամուսնական կարգավիճակի (%) n=231



Պատկեր 42. Շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող միջոցառումներում ներգրավված անձինք ըստ ամուսնական կարգավիճակի (%) n=231



Զբաղվածության կարգավիճակը բացահայտում է ներգրավվածության տարբեր մակարդակներ: Ամենաակտիվն աշխատող անձինք են, որոնց 26%-ը մասնակցում է շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող միջոցառումներին: Նրանց հաջորդում են ուսանողները՝ 22% և ինքնազբաղվածները՝ 19%: Գործազուրկների մասնակցության մակարդակը կազմում է 17%, իսկ թոշակառուների դեպքում՝ 12%: Շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներին մասնակցող անձանց մեծամասնությունն աշխատողներն են (64%) (Նկարներ 43 և 44):

Պատկեր 43. Շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող միջոցառումներում ներգրավվածությունն ըստ զբաղվածության կարգավիճակի (%) n=231



Պատկեր 44. Շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող միջոցառումներում ներգրավված անձինք ըստ զբաղվածության կարգավիճակի (%) n=231



Զեկույցը նկարագրում է ներգրավվածությունը շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող միջոցառումներում՝ ըստ ներգրավվածության մակարդակի (նման միջոցառումներին մասնակցող մարդկանց համամասնությունը ժողովրդագրական խմբի (օրինակ՝ կանայք) կազմում) և նրանց ներկայացվածության մակարդակի (այդ ժողովրդագրական խմբի մասնաբաժինն ակտիվ մասնակիցների ընդհանուր խմբի մեջ):

Ներգրավվածության ամենաբարձր մակարդակները գրանցվել են հետևյալ խմբերում՝ տղամարդիկ (25%), 16-24 տարեկաններ (28%), բարձրագույն կրթություն (գիտությունների թեկնածու, դոկտոր կամ համարժեք) ունեցողներ (31%), քաղաքաբնակներ (27%), քաղաքացիական միության մեջ գտնվողներ (43%) և աշխատողներ (26%):

Բնապահպանական գործողություններում ներգրավվածների կազմը դիտարկելիս, ընդհակառակը, մեծամասնությունը կազմում են տղամարդիկ (58%), 25-34 տարեկանները (24%), բուհական (բակալավրի, մագիստրոսի կամ համարժեք) (41%) աստիճան ունեցողները, քաղաքային (ոչ մայրաքաղաքի) բնակիչները (34%), ամուսնացածները (58%) և աշխատողները (56%):

Շրջակա միջավայրի պահպանության գործում անհատական ներդրման արդյունավետ ուղիների վերաբերյալ ընկալումները

Հարցման 231 մասնակցի, որոնք հայտնել են շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող միջոցառումներում իրենց ներգրավվածության մասին, խնդրել են գնահատել այն եղանակների արդյունավետությունը, որոնցով անհատները կարող են անձամբ նպաստել շրջակա միջավայրի պահպանությանը: Տարբերակները գնահատվել են 1-ից (բացարձակապես անարդյունավետ) մինչև 5-ը (չափազանց արդյունավետ) սանդղակով, ինչը հնարավորություն է տալիս պատկերացում կազմել անհատական ներդրման առավել ազդեցիկ ձևերի վերաբերյալ հանրային ընկալումների մասին: Օգտագործվում են թվաբանական միջիններ՝ անհատական ներդրում կատարելու ամենաազդեցիկ ձևի վերաբերյալ ընկալումը որոշելու համար (Պատկեր 45 և Հավելված 3):

Պատկեր 45. Շրջակա միջավայրի պահպանության գործում անհատական ներդրման ընկալվող ընդհանուր արդյունավետություն n=231



Հայաստանի հանրությունը թափոնների վերամշակումն ու կրճատումն ընկալում է՝ որպես շրջակա միջավայրի պահպանության ամենաարդյունավետ անհատական գործողություն, որին հաջորդում է էներգիայի խնայողությունը: Կայուն տրանսպորտը համարվում է երրորդ ամենաարդյունավետը, մինչդեռ բնապահպանական քաղաքականությանն ու նախաձեռնություններին աջակցելը չորրորդ տեղում է: Նշված տարբերակներից կայուն, էկոլոգիապես մաքուր գործելակարգերին աջակցելը համարվում է ամենաքիչ արդյունավետը: (Պատկեր 45)

Շրջակա միջավայրի պահպանության գործունեությամբ զբաղվելու խոչընդոտները

Շրջակա միջավայրի պահպանությանն անհատապես մասնակցելու վերաբերյալ հանրության ընկալումը հայցելուց հետո հարցման 769 մասնակցի, որոնք հայտնել են բնապահպանական գործունեությամբ անձամբ չզբաղվելու մասին, խնդրել են բացահայտել այն խոչընդոտները, որոնք խանգարել են նրանց մասնակցությանը (Պատկեր 46):

Պատկեր 46. Բնապահպանական գործունեությամբ անձամբ չզբաղվելու վերաբերյալ հայտնած խոչընդոտները (%) n=769



Բնապահպանական գործունեությամբ անձամբ զբաղվելու խոչընդոտների շարքում ամենից հաճախ նշվել է ժամանակի սղությունը, որը նշել է հարցվածների 56%-ը, մասնավորապես՝ ուսանողները (44%) և աշխատողները (38%), որոնք ներկայացնում են նաև չմասնակցողների 61%-ը: Ֆինանսական ծախսերը երկրորդ ամենաշատ նշվող խոչընդոտն է, որը նշել է հարցվածների 38%-ը՝ հատկապես թոշակառուները (27%): Տեղեկատվության պակասն արձանագրվել է 35%-ի կողմից, ընդ որում՝ այս խոչընդոտից տուժած ամենամեծ խումբը բուհերի շրջանավարտներն են (33%): Բացի այդ՝ հարցվածների 28%-ը չի մասնակցել, քանի որ բնապահպանական գործունեությունը համարում է ոչ սովորական, իսկ 17%-ը մասնակցությունը համարել է անօգուտ:

3.8. Հայաստանում էներգաարդյունավետության և էներգետիկ անվտանգության վերաբերյալ պատկերացումները

Մարդկային գործունեությունը կլիմայի փոփոխության պատճառ համարող մարդկանց 56%-ի կողմից ոչ էներգաարդյունավետ գործելակարգերը ճանաչվել են որպես խնդիր: Բնապահպանական գործունեությամբ զբաղվելու մասին պնդող մարդկանց 55%-ն էներգիայի խնայողությունը գնահատել է շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող «չափազանց արդյունավետ» միջոց, իսկ 21%-ը՝ «շատ արդյունավետ»: Հետևաբար, Հայաստանում էներգաարդյունավետության և էներգետիկ անվտանգության վերաբերյալ հանրային պատկերացումների ուսումնասիրությունը շատ կարևոր է:

Հարցումն ուսումնասիրել է տարբեր թեմաներ՝ ներառյալ էներգակիրների գների մտահոգությունները, Հայաստանում վերականգնվող էներգիայի կիրառման հետ կապված ընկալումներն ու գործելակարգերը, ինչպես նաև էներգակիրների՝ օտարերկրյա աղբյուրներից կախվածության հետ կապված մտահոգությունները:

Հայաստանում էներգակիրների գների հետ կապված մտահոգությունը

Հարցման շրջանակում հայաստանցիներին խնդրել են նշել, թե որ էներգակիրների գներն են ամենամտահոգիչը: Միայն մեկ պատասխանի հնարավորությամբ ստորև բերված հատվածը ցուցադրում է, թե որ էներգակիրներն են Հայաստանում ընկալվում՝ որպես ամենամեծ ֆինանսական բեռ պարունակողը (Պատկեր 47):

Պատկեր 47. Հայաստանում հանրությանն ամենաշատ հուզող էներգակիրների գները (%) n=1,000



Բոլոր հարցվածների շրջանում ամենից հաճախ հիշատակված մտահոգությունը գազի գինն է. այն ընտրել է 40%-ը: Էներգակիրների մտահոգիչ արժեքով երկրորդ տեղում է էլեկտրաէներգիայի գինը, որն ընտրել է հարցվածների 32%-ը: Բենզինի/վառելիքի գները մտահոգիչ են հարցվածների 16%-ի համար: Մարդկանց միայն 4%-ը որևէ մտահոգություն չի հայտնել Հայաստանում էներգակիրների գների վերաբերյալ:

Հայաստանում վերականգնվող էներգետիկայի ներդրման պրակտիկան

Տասը հարցվողներից գրեթե երկուսը (19%) նշել են, որ փորձել են իրենց տնային տնտեսություններում կիրառել վերականգնվող էներգիայի աղբյուրներ: Դրա կիրառումն ավելի տարածված է տղամարդկանց շրջանում (արական սեռի հարցվողների 26%-ը, որը հանդիսանում է բոլոր կիրառողների 51%-ը) և գյուղաբնակների կողմից (26%-ը գյուղական բնակավայրերի հարցվողներից, որը նաև կազմում է կիրառողների 51%-ը):

Վերականգնվող էներգիայի կիրառմանը հետամուտ չլինելու առաջնային պատճառներն են եղել ֆինանսական անկարողությունը (նշել է չկիրառողների 43%-ը) և այն համոզմունքը, որ փոքր քաղաքային բնակարաններում ապրելն այն անիրագործելի է դարձնում (13%):

Հանրային կարծիքը Հայաստանում վերականգնվող էներգետիկայի մասին

Թեև հարցման բոլոր մասնակիցների միայն 19%-ն է հայտնել, որ փորձել է կիրառել վերականգնվող էներգիայի աղբյուրներ տնային տնտեսություններում, սակայն դրա կիրառման նկատմամբ հետաքրքրության արդյունքումհարցվածների 50%-ը հայտնել է, որ ամենայն հավանականությամբ կաջակցի հողմային և արևային էներգետիկայի զարգացմանն ուղղված թիրախային նախաձեռնություններին (37%-ը՝ «չափազանց մեծ հավանականություն», իսկ 13%-ը՝ «մեծ հավանականություն»):

Հաշվի առնելով այս հետաքրքրությունը՝ կարևոր է հասկանալ հանրային կարծիքը վերականգնվող էներգիայի տարբերակների վերաբերյալ, ինչպիսիք են՝ հողմային և արևային էներգիան: Հարցումը նաև գնահատել է հարցվածների շրջանում վերականգնվող էներգետիկայի բնապահպանական ու տնտեսական օգուտների և դրա կիրառումը հեշտացնելու հարցում կառավարության ընկալվող դերի միջև համաձայնության մակարդակը:

Հարցվողներին խնդրել եննշել վերականգնվող էներգիայի վերաբերյալ մի շարք հայտարարությունների հետ իրենց համաձայնության մակարդակը՝ 1-ից (բացարձակապես համաձայն չեմ) մինչև 5-ը (լիովին համաձայն եմ) սանդղակով: Յուրաքանչյուր հայտարարության մասով համաձայնության ընդհանուր մակարդակը ներկայացնում է թվաբանական միջիններ՝ որոշելու համար, թե որ հայտարարություններն են ավելի ընդունելի (Պատկեր 48):

Պատկեր 48. Վերականգնվող էներգիայի վերաբերյալ հայտարարությունների հետ ընդհանուր հանրային համաձայնությունը n=1,000



Առավել լայն տարածում ստացած համոզմունքն այն է, որ վերականգնվող էներգիայի աղբյուրներն էկոլոգիապես ավելի մաքուր են, քան բրածո վառելանյութերը (ընդհանուր հանրային համաձայնության գնահատականը 4,49 է 5-ից), ինչպես կարծում են գյուղաբնակները (կազմելով 46% նրանց շրջանում, որոնք «լիովին համաձայն են»):

Հետևելով դրան՝ հարցվածների մեծ մասը կարծում է, որ վերականգնվող էներգիայի համակարգեր գործարկող տնային տնտեսություններին կառավարությունը պետք է ֆինանսական արտոնություններ տրամադրի (ընդհանուր հանրային համաձայնության գնահատականը՝ 4,48), որին ամենամեծ համաձայնություն են տվել բուհերի շրջանավարտները (բակալավրի, մագիստրոսի կամ համարժեք աստիճան ունեցող անձանց 74%-ը և գիտությունների թեկնածուների, դոկտորների կամ համարժեք աստիճան ունեցողների 86%-ը «լիովին համաձայն» են այս հայտարարության հետ):

Շատերը նաև կարծում են, որ վերականգնվող էներգիայի կիրառումը կարող է բարձրացնել իրենց համայնքի սոցիալական և տնտեսական բարեկեցությունը (ընդհանուր հանրային համաձայնության գնահատականը՝ 4.38), գյուղական և քաղաքային (ոչ մայրաքաղաքի) բնակիչների 69%-ի զգալի աջակցությամբ, որոնք «լիովին համաձայն են» այս հայտարարության հետ:

Ծախսերի երկարաժամկետ խնայողությունը ճանաչվել է որպես վերականգնվող էներգիայի կիրառման առավելություն, թեև սկզբնական շրջանում բարձր ծախսերը մնում են մտահոգիչ (ընդհանուր հանրային համաձայնության գնահատականը՝ 4.3), և 25-34 տարեկան մարդկանց 55%-ը «բացարձակապես համաձայն չէ», որ վերականգնվող էներգիայի կիրառումը հանգեցնում է ծախսերի զգալի խնայողության:
Եվ վերջում՝ շատերը համարում են, որ վերականգնվող էներգիան ավելի կայուն հասանելիություն է ապահովում, քան ավանդական աղբյուրները (համաձայնության ընդհանուր գնահատականը՝ 4.13):

Հայաստանի էներգակիրների՝ օտարերկրյա աղբյուրներից կախվածության վերաբերյալ հանրության մտահոգությունները

Հարցման մասնակիցներին խնդրել են գնահատել Հայաստանի էներգակիրների՝ օտարերկրյա աղբյուրներից կախվածության վերաբերյալ իրենց մտահոգության մակարդակը՝ 1-ից (բոլորովին չմտահոգված) մինչև 5-ը (չափազանց մտահոգված) սանդղակով՝ գնահատելու էներգետիկ անվտանգության վերաբերյալ հանրային տրամադրվածությունը և էներգակիրների արտաքին մատակարարներին ապավինելու հետ կապված հնարավոր խոցելիությունը (Պատկեր 49):

Պատկեր 49. Հայաստանի էներգակիրների օտարերկրյա աղբյուրներից կախվածության վերաբերյալ մտահոգությունը (%) n=1,000



Բոլոր հարցվածների 62%-ը մեծ մտահոգություն է հայտնել Հայաստանի էներգակիրների՝ օտարերկրյա աղբյուրներից կախվածության վերաբերյալ, ընդ որում՝ 53%-ը «չափազանց մտահոգված» է, իսկ 9%-ը՝ «զգալիորեն մտահոգված»: Միայն 6%-ը «բոլորովին մտահոգված չէ», իսկ 1%-ը կարծում է, որ Հայաստանը կախված չէ էներգակիրների օտարերկրյա աղբյուրներից: (Պատկեր 49)

Հարցումը ցույց է տալիս, թե ինչպես են տարբեր խմբերն ընկալում Հայաստանի կախվածությունը էներգակիրների օտարերկրյա աղբյուրներից: Մտահոգության մակարդակները զգալիորեն տարբերվում են՝ կախված այնպիսի գործոններից, ինչպիսիք են՝ բնակության վայրը և կրթությունը (Պատկեր 50):

Պատկեր 50. Հայաստանի էներգակիրների օտարերկրյա աղբյուրներից կախվածության վերաբերյալ մտահոգությունն ըստ բնակության վայրի և կրթության (%) n=1,000



Բնակավայրերի միջև էական տարբերություն չկա, երբ խոսքը վերաբերում է Հայաստանի էներգակիրների՝ օտարերկրյա աղբյուրներից կախվածության վերաբերյալ մտահոգություններին: Անկախ գտնվելու վայրից՝ բնակիչների միայն փոքր մասն է նշում, որ բոլորովին մտահոգված չէ (6%՝ գյուղական բնակավայրերում ու մայրաքաղաքում և 5%՝ քաղաքներում):

Հատկանշական է, որ «չափազանց մտահոգված» է բուհական (բակալավրի, մագիստրոսի կամ համարժեք) աստիճան ունեցող մարդկանց 56%-ը, մինչդեռ այս խմբի 7%-ը որևէ մտահոգություն չի հայտնում: (Պատկեր 50)

Հայաստանում ավելի մեծ էներգետիկ անկախության հասնելու ուղիների մասին պատկերացումները

Հարցման շրջանակում Հայաստանի էներգակիրների՝ օտարերկրյա աղբյուրներից կախվածության վերաբերյալ մտահոգություն հայտնած 929 հարցվողին խնդրել են նշել այն բոլոր ուղիները, որոնց միջոցով երկիրը կարող է հասնել ավելի մեծ էներգետիկ անկախության (Պատկեր 51):Մարդկային գործունեությամբ պայմանավորված կլիմայի

փոփոխության արմատական պատճառների մասին գյուղական, քաղաքային և մայրաքաղաքի բնակիչների պատկերացումները հասկանալը կարևոր է, քանզի նրանց տեսակետները կարող են տարբերվել՝ ելնելով յուրահատուկ բնապահպանական համատեքստից և նրանց ամենօրյա փորձից (Պատկեր 20):

Պատկեր 51. Հայաստանի ավելի մեծ էներգետիկ անկախության հասնելու ուղիների մասին մեջբերումները (%) n=929



Հայաստանի էներգակիրների՝ օտարերկրյա աղբյուրներից կախվածության վերաբերյալ մտահոգված հարցվողների 91%-ն աջակցում է արևային և հողմային էներգետիկայի զարգացմանը. այս նախաձեռնությունը հիմնականում հավանում են գյուղաբնակները (մտահոգված գյուղաբնակների 93%-ը) և 65+ տարիքային խումբը (96%): Էներգաարդյունավետության և ժամանակակից տեխնոլոգիաների մեջ ներդրումներ կատարելուն աջակցում է հարցվածների 85%-ը. կանայք կազմում են այդ աջակիցների 64%-ը: Այլընտրանքային էներգետիկ լուծումների խթանմանը կողմ է հարցվածների 81%-ը. աջակիցների 50%-ը գյուղաբնակներ են, իսկ 43%-ը՝ բուհերի շրջանավարտներ: Բացի այդ՝ 80%-ը կողմ է էներգակիրների մատակարարների դիվերսիֆիկացմանը, մինչդեռ 77%-ն աջակցում է հիդրոէլեկտրակայանների զարգացմանը:

3.9. Հանրային աջակցություն թեմատիկ նախաձեռնություններին

Հարցվողները կիսվել են իրենց նախընտրած ռազմավարություններով, թե ինչպես Հայաստանը կարող է լուծել տարատեսակ բնապահպանական և կլիմայական խնդիրներ: Ամենատարածված տարբերակն է կանաչ տարածքների ստեղծումն ու ընդլայնումը (94%), որին հաջորդում են կայուն գործելակարգերի խրախուսումը (89%), հանրության կրթումը և իրազեկվածության բարձրացումը (88%) և թափոնների կառավարման բարելավումը (87%) (Պատկեր 52):

Պատկեր 52. Արդյունավետ ռազմավարություններ բնապահպանական խնդիրների և կլիմայի փոփոխության դեմ (%) n=1,000



Հարցման մասնակիցներին խնդրել ենևաև գնահատել կլիմայի փոփոխությանը, շրջակա միջավայրի պահպանությանը, էներգետիկ անվտանգությանն ու անկախությանն ուղղված տարատեսակ նախաձեռնություններին աջակցելու իրենց հավանականությունը՝ 1-ից (ամենևին անհավանական) մինչև 5-ը (չափազանց հավանական) սանդղակով: Թեմատիկ նախաձեռնությունների ընդհանուր աջակցությունը հաշվարկվել է թվաբանական միջինների կիրառմամբ՝ նախընտրելի նախաձեռնությունները որոշելու համար (Պատկեր 53 և Հավելված 4):

Պատկեր 53. Ընդհանուր աջակցություն տարբեր նախաձեռնություններին n=1,000



Վերոհիշյալ նախաձեռնություններին աջակցելու իրենց նախընտրած ուղիների մասին հարցին 967 մասնակից նշել է աջակցության լավագույն վեց ձևերը՝ առօրյա կյանքում էկոլոգիապես մաքուր գործելակարգերի կիրառում (76%), կամավորությամբ ժամանակի և ջանքերի տրամադրում համապատասխան գործունեությանը (74%), ջատագովություն և համագործակցություն տարատեսակ դերակատարների հետ (61%), մասնակցություն բնապահպանական խնդիրների վերաբերյալ աշխատաժողովներին, սեմինարներին և կրթական ծրագրերին (60%), մասնակցություն իրազեկման արշավներին և տեղեկատվության փոխանակմանը (58%) և ֆինանսական ռեսուրսների տրամադրում (թեմատիկ նախաձեռնություններին նվիրաբերելով փող կամ ռեսուրսներ) (54%):

Մյուս կողմից՝ նման նախաձեռնություններին աջակցելու գործում ամենահաճախ ընկալվող խոչընդոտներն են անտարբերությունը կամ պատասխանատվության բացակայությունը (նշել է 84%-ը), իրազեկվածության բացակայությունը (72%), ֆինանսների բացակայությունը (72%) և անվստահությունը նախաձեռնությունների արդյունավետության և ներգրավված դերակատարների նկատմամբ (67%) (Պատկեր 54):

Պատկեր 54. Թեմատիկ նախաձեռնություններին աջակցելու գործում ընկալվող խոչընդոտները (%) n=1,000



Եզրակացություն

Հանրության պատրաստվածությունը և պատրաստակամությունը՝ աջակցելու Հայաստանում կանաչ անցման նախաձեռնություններին. ազգային զեկույց

4. Եզրակացություն

Այս ուսումնասիրությունը կենտրոնանում է Հայաստանում կլիմայի փոփոխության և բնապահպանական խնդիրների վերաբերյալ հանրության ընկալումների վրա: Այն նախատեսված է տարբեր շահագրգիռ կողմերին՝ ներառյալ կառավարությանը, քաղաքացիական հասարակությանը, մասնավոր հատվածին, ինչպես նաև բնապահպանական գործունեությամբ հետաքրքրված և դրանում ներգրավված լայն հանրությանը տեղեկացնելու հանրային տեսակետների և կարծիքների մասին՝ կապված կլիմայի փոփոխության, բնապահպանական խնդիրների, գործունեությանառաջնահերթ ոլորտների և այս թեմաներին առնչվող տարատեսակ դերակատարների մասին: Պատկերացումներ ապահովելով հանրային ընկալման, տեղեկատվության աղբյուրների, բնապահպանական գործունեության մեջ ներգրավվածության և թեմատիկ նախաձեռնություններին աջակցության մասին՝ ուսումնասիրությունը նպատակ ունի նպաստելու տեղեկացվածությանը՝ բնապահպանական մարտահրավերների լուծումների ուղղությամբ որոշումների կայացման նպատակով:

Առաջարկվում է կատարել լրացուցիչ որակական ուսումնասիրություն՝ քանակական արդյունքների ըմբռնումը բարձրացնելու և արժեքավոր բովանդակություն ապահովելու համար: Հարցազրույցների և ֆոկուս-խմբային քննարկումների միջոցով այս մոտեցումը կարող է ի հայտ բերելկլիմային առնչվող գործունեության այն հեռանկարները, դրդապատճառները և խոչընդոտները, որոնք միայն թվերով հնարավոր չէ ներկայացնել: Որակական ուսումնասիրությունը կնկարագրի տարբեր ժողովրդագրական խմբերի փորձառությունը՝ լույս սփռելով Հայաստանում բնապահպանական ոլորտի իրազեկման և գործողությունների վրա ազդող էմոցիոնալ և սոցիալական գործոնների վրա: Բացի այդ՝ այն կարող է ուսումնասիրել, թե ինչպես են տեղական մշակույթը, սոցիալ-տնտեսական պայմանները և տարածաշրջանային տարբերությունները ձևավորում կլիմայի վերաբերյալ ընկալումներն ու առաջնահերթությունները՝ ի վերջո ուղղորդելով քաղաքականություն մշակողներին՝ ձևավորելու ողջ երկրում բնապահպանական նախաձեռնություններին աջակցելու նպատակով թիրախային, արդյունավետ գործողությունների շրջանակ:

Հավելված

Հանրության պատրաստվածությունը և պատրաստակամությունը՝ աջակցելու Հայաստանում կանաչ անցման նախաձեռնություններին. ազգային զեկույց

Հավելված 1. Հարցվողների ժողովրդագրական տվյալներ

Պատկեր 1. Հարցվողների սեռը, տարիքը և կրթությունը (%) n=1,000



Պատկեր 2. Հարցվողների էթնիկ պատկանելությունը, բնակության վայրը և զբաղվածության կարգավիճակը (%) n=1,000



Պատկեր 3. Հարցվողների ամուսնական կարգավիճակը (%) n=1,000



Հավելված 2. Հետազոտության մեթոդաբանություն

Այս հետազոտությունը գնահատում է հանրության պատրաստվածությունն ու պատրաստակամությունը՝ աջակցելու Հայաստանում կանաչ փոխակերպման նախաձեռնություններին: Այն նպատակ ունի հասկանալ կլիմայի փոփոխության և բնապահպանական խնդիրների վերաբերյալ հանրային իրազեկվածությունը,

- Ուսումնասիրել Հայաստանում կլիմայի փոփոխության վերաբերյալ հանրության պատկերացումները:
- Բացահայտել Հայաստանում կլիմայի փոփոխության և բնապահպանական խնդիրների վերաբերյալ հանրության համար հասանելի տեղեկատվության աղբյուրները և գնահատել դրանց նկատմամբ վստահելիության չափանիշները:
- Վերլուծել կլիմայի փոփոխության ազդեցության ընկալումները Հայաստանի տարբեր ժողովրդագրական խմբերում:
- Հետազոտել Հայաստանում կլիմայի փոփոխության արմատական պատճառների ընկալումները:
- Գնահատել բնապահպանական խնդիրների վերաբերյալ հանրության ընկալումները և որոշել Հայաստանում շրջակա միջավայրի պահպանության առաջնահերթ ոլորտները:
- Գնահատել շրջակա միջավայրի պահպանության գործում տարբեր դերակատարների ընկալվող կարևորությունն ու արդյունավետությունը:
- Չափել Հայաստանում շրջակա միջավայրի պահպանության միջոցառումներում անձնական ներգրավվածության մակարդակը:
- Հետազոտել հանրային ընկալումներն էներգաարդյունավետության և էներգետիկ անվտանգության վերաբերյալ:
- Գնահատել հանրային աջակցությունը կանաչ փոխակերպման հետ կապված թեմատիկ նախաձեռնություններին և բացահայտել այդ նախաձեռնություններին նպաստելու նախընտրելի ձևերն ու դրանց աջակցելու խոչընդոտները:

Ելնելով այս նպատակներից՝ ACT-ն կիրառել է տվյալների հավաքագրման ինչպես որակական, այնպես էլ քանակական մեթոդներ:

- Ֆոկուս-խմբային քննարկումներ (ՖԽՔ, FGDs) և խորքային հարցազրույցներ (ԽՀ, IDIs)

ACT-ն կիրառել է որակական մեթոդներ՝ քանակական հետազոտական հզոր գործիք (հարցաթերթիկ) մշակելու համար: Հայաստանում տեղի է ունեցել երկու ֆոկուս-խմբային քննարկում. մեկը լայն հանրության հետ (վեց մասնակից)՝ նախնական մտքերի, ընկալումների, վերաբերմունքի և իրազեկվածության մասին տեղեկատվություն հավաքագրելու, ինչպես նաև հետազոտության գործիքի մշակման մասին տեղեկացնելու նպատակով: Մյուս հանդիպումը կայացել է ոլորտային վեց մասնագետների հետ՝ մշակված գործիքի վերաբերյալ կարծիք ստանալու և այն վերջնական համաձայնեցնելու նպատակով: Հետազոտության հարցաթերթիկը վերջնական տեսքի բերելուց հետո այն կիրառվել է լայն հանրության ներկայացուցիչների հետ հինգ խորքային ճանաչողական հարցազրույցներում՝ պարզություն և ըմբռնելիություն ապահովելու համար: Այս հանդիպումներից հավաքագրված տեղեկատվությունը մշակվել է բովանդակության վերլուծության միջոցով՝ հետագայում կատարելագործելով հետազոտության գործիքը:

Համակարգչի օգնությամբ հեռախոսային հարցազրույց (ՀՕՀՀ, CATI)

Աղյուսակ 1. Ընդհանուր բնակչությունը և քվոտաները հետազոտության շրջանակում

	Բնակչություն(N)			Քվոտաներ(N)		
Տարածաշ	Քաղաք	Գյուղ	Ընդա	Քաղաք	Գյուղ	Ընդա
Երևան	867 488	-	867 488	370	0	370
Արագածոտն	20 182	77 183	97 365	9	33	42
Արարատ	55 419	146 190	201 609	23	63	86
Արմավիր	65 024	145 530	210 554	28	62	90
Գեղարքունիք	51 485	128 839	180 324	22	55	77
Լոռի	97 219	67 234	164 453	41	26	70
Կոտայք	105 338	91 089	196 427	45	39	84
Շիրակ	105 889	73 585	179 474	45	32	77
Սյունիք	74 245	35 535	109 780	32	15	47
Վայոց ձոր	12 682	25 126	37 808	5	11	16
Տավուշ	40 267	55 500	95 767	17	24	41
Ընդամենը	1 495 238	845 811	2 341 049	637	363	1000

ACT-ն անցկացրել է հեռախոսային հարցում ողջ երկրի տարածքում՝ օգտագործելով պատահականության սկզբունքով գեներացված բջջային հեռախոսահամարները, որոնք ընդգրկել են Հայաստանի բոլոր բջջային օպերատորների կոդերը: Այս հեռախոսահամարները տեղադրվել են մասնագիտացված հեռախոսային հարցումների ծրագրի մեջ՝ ավտոմատ կերպով զանգեր կատարելով և զանգին պատասխանելու դեպքում բաժանորդներին միացնելով հարցազրուցավարի հետ:

ACT-ը տվյալներ է հավաքել 16+ տարեկան անձանցից, որոնք առնվազն երկու տարի շարունակ բնակվել են երկրում: Հետազոտության ընտրանքը թիրախավորել է երկրում բնակության վայրը (մայրաքաղաք, քաղաքային, գյուղական բնակավայրեր): Ստորև բերված աղյուսակում ներկայացված են բնակչության թիվը և համապատասխան քվոտաների բաշխումը՝ ըստ բնակավայրերի տեսակի (Աղյուսակ 1):

Հարցումը բաղկացած էր 1,000 հարցազրույցից՝ հասնելով 95% վստահության ինտերվալի՝ 3,1% սխալի սահմանով, ինչը ցույց է տալիս Հայաստանում 16 և ավելի բարձր տարիքի թիրախային բնակչության շրջանում կատարված հետազոտության արդյունքների բարձր հավաստիությունն ու ներկայացուցչականությունը: Տվյալների ճշգրտումից հետո յուրաքանչյուր հարցազրույցի տրվել է կշիռ՝ ապահովելու թիրախային բնակչությանն ընդհանրացնելու հնարավորությունը: Տվյալներին կշիռ սահմանելու գործընթացի միջոցով ճշգրտվել է ցանկացած աննշան շեղում, որը կարող էր առաջանալ դաշտային աշխատանքի ընթացքում՝ վերականգնելով ժողովրդագրական ընդհանուր կառուցվածքը:
Հետազոտական թիմն օգտագործել է SPSS-ը՝ որպես տվյալների մշակման և վերլուծության առաջնային գործիք: Այն նպաստել է հավաքագրված տվյալների ճշգրտմանն ու կազմակերպմանը, տրամաբանական անհամապատասխանությունների բացահայտմանն ու շտկմանը:

Ուսումնասիրության սահմանափակումներ. այս հետազոտությունն ունի մի քանի սահմանափակումներ, որոնք արժանի են ուշադրության: Ֆոկուս-խմբային քննարկման ընտրանքը, չնայած լինելով տեղեկատվական, համեմատաբար փոքր է, ինչը կարող է սահմանափակել արդյունքների ավելի լայն կիրառելիությունը: Չնայած ճանաչողական հարցազրույցների նպատակն էր ապահովել հստակություն, սակայն դրանք սահմանափակված էին ընդհանուր ժողովրդագրությամբ՝ հնարավորինս անտեսելով բնակչության որոշակի հատվածների առանձնահատկությունները: Բացի այդ՝ որակական պատկերացումները կրում են առանձնահատուկ սուբյեկտիվություն, քանի որ մասնակիցների ընկալումները և ֆասիլիտատորների մեկնաբանությունները կարող են աննկատ կերպով ազդել հետազոտության ձևավորման վրա: Եվ վերջում՝ աշխարհագրական կենտրոնացումը Հայաստանի վրա սահմանափակում է արդյունքների տեղայնացումը տարբեր մշակութային կամ տարածաշրջանային միջավայրեր, որոնք կարող են ունենալ եզակի համատեքստային դինամիկա՝ ազդելով հետազոտության պատասխանների վրա:

Հավելված 3. Շրջակա միջավայրի պահպանության գործում անհատական ներդրման արդյունավետ ուղիների վերաբերյալ ընկալումները

Հարցվողներին առաջարկված տարատեսակ տարբերակների շարքում անհատների համար շրջակա միջավայրի պահպանությանը նպաստելու ուղիներից ամենաբարձր գնահատականն են ստացել թափոնների վերամշակումն ու կրճատումը: Այն «չափազանց արդյունավետ» է համարել 62%-ը, «շատ արդյունավետ»՝ 16%-ը: Բացի այդ՝ 16%-ն այն գնահատել է «չափավոր արդյունավետ», 4%-ը՝ «աննշան արդյունավետ», իսկ 2%-ը՝ «բացարձակապես անարդյունավետ»:

Էներգախնայողությունը գնահատվել է որպես անհատական ներդրման երկրորդ ամենաարդյունավետ ձևը: Այն «չափազանց արդյունավետ» է համարվել հարցվողների 55%-ի և «շատ արդյունավետ»՝ 21%-ի կողմից, որոնք մասնակցում են շրջակա միջավայրի պահպանությանը նպաստող միջոցառումներին: Մինչդեռ 19%-ն այն գնահատել է «չափավոր արդյունավետ», 2%-ը՝ «աննշան արդյունավետ» և 3%-ը՝ «բացարձակապես անարդյունավետ»:

Հանրությունն ընկալում է կայուն տրանսպորտը՝ որպես շրջակա միջավայրի պահպանության գործում անհատական ներդրման երրորդ ամենաարդյունավետ ձևը: Այն «չափազանց արդյունավետ» է համարել հարցվածների 49%-ը, «շատ արդյունավետ»՝ 23%-ը, «չափավոր արդյունավետ»՝ 20%-ը, «աննշան արդյունավետ»՝ 4%-ը և «բացարձակապես անարդյունավետ»՝ 4%-ը: Կայուն տրանսպորտի կարևորության ճանաչումը հետագայում ապացուցվում է այն փաստով, որ տրանսպորտային արտանետումների կրճատումը հարցվածների 10%-ի կողմից նշվել է՝ որպես շրջակա միջավայրի պահպանության գլխավոր գերակայություն:

Բնապահպանական քաղաքականությանն ու նախաձեռնություններին աջակցելը համարվել է շրջակա միջավայրի պահպանության գործում անհատական ներդրման չորրորդ ամենաարդյունավետ ձևը: Այն գնահատվել է «չափազանց արդյունավետ» հարցվածների 47%-ի կողմից և «շատ արդյունավետ»՝ 22%-ի կողմից: Բացի այդ՝ 21%-ն այն գնահատել է «չափավոր արդյունավետ», 7%-ը՝ «աննշան արդյունավետ», իսկ 3%-ը՝ «բացարձակապես անարդյունավետ»:

Աջակցությունը կայուն, էկոլոգիապես մաքուր գործելակարգերին, ինչպիսիք են՝ օրգանական արտադրանք գնելը կամ պոլիէթիլենային տոպրակներից հրաժարվելը, համարվում է շրջակա միջավայրի պահպանության գործում անհատական ներդրման հինգերորդ ամենաարդյունավետ ձևը, որը գնահատվել է «չափազանց արդյունավետ»՝ հարցվածների 45%-ի, «շատ արդյունավետ»՝ 21%-ի կողմից: Մինչդեռ 26%-ն այն գնահատել է «չափավոր արդյունավետ», 3%-ը՝ «աննշան արդյունավետ», իսկ 4%-ը՝ «բացարձակապես անարդյունավետ»: Հարցվածների միայն 1%-ն է դժվարացել գնահատել կայուն, էկոլոգիապես մաքուր գործելակարգերին աջակցելու արդյունավետությունը:

Հավելված 4. Հանրային աջակցությունը տարատեսակ նախաձեռնություններին

Որպես ամենամեծ աջակցություն ստացած նախաձեռնության տեսակ՝ նշվել են կրթական ծրագրերը և տեղեկատվական արշավները , ընդ որում՝ հարցվածների 40%-ը նշել է «չափազանց մեծ հավանականություն», որ կաջակցի նման նախաձեռնություններին, իսկ 14%-ը՝ «մեծ հավանականություն»:

Երկրորդ ամենասպասված նախաձեռնությունն է վերականգնվող էներգետիկայի զարգացումը (այսինքն՝ հողմային և արևային), որին «չափազանց մեծ հավանականությամբ» կաջակցի 37%-ը և «մեծ հավանականությամբ»՝ 13%-ը:

Կառավարության կողմից ղեկավարվող քաղաքականությանն ու կանոնակարգերին «չափազանց մեծ հավանականությամբ» կաջակցի հարցվածների 20%-ը և «մեծ հավանականությամբ»՝ 8%-ը:

Վերջապես, հանրության 17%-ը «չափազանց մեծ հավանականությամբ» և 10%-ը «մեծ հավանականությամբ» կաջակցեն կայուն զարգացման ոլորտում կորպորատիվ նախաձեռնություններին, մինչդեռ ՀԿ-ների նախագծերին «չափազանց մեծ հավանականությամբ» կաջակցի 13%-ը և «մեծ հավանականությամբ»՝ 9%-ը: